

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446



## Այս համարում

### Հայերեն բաժին

Հայաստան.....	2
Մշակույթի.....	24
Հասարակական.....	25
Հայկականը.....	26

### Պարսկերեն բաժին-

Հայ կոմունիստները Իրանում.....	1-2
--------------------------------	-----

Շապիկի առաջին էջը՝ Միսաք Մանուշյան.  
 Շապիկի վերջին էջը՝ Էդ. Բաղդասարյանի սոր գրքերը

Համար 305, Մարտ 2024թ. No. 305, March 2024

ماهنامه لویس - شماره ۳۰۵ فروردین ماه ۱۴۰۳

## ԼՈՒՅՍ Ամսագիր

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝  
**Էդ. Բաղդասարյան**

### Խմբագրական կազմ՝

Էդ. Բաղդասարյան, Թամար Փանոսյան,  
 Վանիկ Բաղդասարյան, Ռուբեն Զեշիշյան,  
 Էդիկ Մեհրաբյան, Թամ Ղարախանյան

Էլեկտրոնային փոստ՝ louys\_monthly@yahoo.com  
 Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

## LOUYS

### Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

**Edic Baghdasarian**

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **E.B. Baghdasarian**

E-mail : **louys\_monthly@yahoo.com**

Internet : **www.louysonline.com**

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են  
 չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
 Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին  
 պարտադիր է:

## ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

پست الکترونیکی: louys\_monthly@yahoo.com

نشانی اینترنت: **www.louysonline.com**



## Միսաք և Մելինե Մանուշյանները ամփոփվում են Պանթեոնում՝ որպես հայ և ֆրանսիացի ժողովուրդների բարեկամության խորհրդանիշ

21.02.2024



Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի 2023 թ. հուլիսի 18-ի որոշումով Ֆրանսիական դիմադրության հերոս, Հայոց ցեղասպանությունը վերապրած Միսաք Մանուշյանի և նրա կնոջ՝ Նույնպես Հայոց ցեղասպանությունը վերապրած Մելինե Մանուշյանի աճյունները փետրվարի 21-ին, Մանուշյանի և նրա զինակից ընկերների մահապատժի ութսունամյա տարելիցի կապակցությամբ տեղափոխվել են Ֆրանսիայի Պանթեոն: Միսաք և Մելինե Մանուշյաններն այսպիսով դարձան առաջին օտարազգի գործիչները, որոնք կամփոփվեն ֆրանսիացի մեծությունների կողքին՝ դառնալով հայ և ֆրանսիացի ժողովուրդների բարեկամության կարևոր խորհրդանիշներ: Այս մասին հայտնում են Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտից:

Միսաք Մանուշյանը (ընդհատակյա անունը՝ Միշել ժորժ) ծնվել է 1906 թ. Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Աղըյաման քաղաքում: Օսմանյան պետության իրականացրած Հայոց ցեղասպանության տարիներին նրա ծնողները սպանվել են: Ավագ եղբոր՝ Կարապետի հետ միասին որբ մնացած Միսաք Մանուշյանը գաղթել է Սիրիա, հայտնվել Ջունիե քաղաքի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության որբանոցում:



Մանուշյանը 3-րդ շարքում աջից՝ 3-րդն է: Կրծքին՝ խաչ: 1925 թ. ձեռքբերված պայմանավորվածության համաձայն Սիրիայում գտնվող հայ որբերին տարել են Ֆրանսիա:

սիա, որտեղ էլ նա կերտել է իր հերոսական ուղին: 1934 թ. ներգրավվել է Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության շարքերում՝ գուգահեռաբար տպագրելով նաև հայալեզու «Չանգու» բանվորական շաբաթաթերթը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի մեկնարկից հետո, 1940-1944 թթ., Գերմանիայի կողմից Ֆրանսիայի օկուպացման տարիներին բանտարկվել է, ապա ազատ արձակվել, ինչից հետո միացել է դիմադրության շարժմանը՝ գլխավորելով տարբեր ազգություններից բաղկացած երիտասարդ մարդկանցից կազմված մի ջոկատ, որն աչքի ընկել օկուպանտների դեմ պայքարում: Մանուշյանի և նրա մարտիկներին վարկաբեկելու նպատակով նացիստները նրան ներառել են «l’Affiche Rouge» («Կարմիր պաստառ») ազիտացիոն տիպարաչափի ցուցակի մեջ, որում նշված է եղել է որպես խմբի հայազգի առաջնորդ, այդպիսով փորձելով ցույց տալ, որ գերմանացիների դեմ պայքարում են ոչ ֆրանսիացիները:

1943 թվականի նոյեմբերի 16-ի առավոտյան ֆրանսիական ոստիկանության աշխատակիցները ձերբակալել են Մանուշյանի խմբի անդամներին Էվրիում: Նրա կինը՝ Մեյլինեն, կարողացել է փախչել ոստիկանությունից և մահվան է դատապարտվել հեռակա կարգով:

Մանուշյանի խմբի հետ կապ ունենալու մեղադրանքով ձերբակալվել է ընդհանուր առմամբ 68 մարդ:

Մանուշյանը տանջանքների է ենթարկվել և երեք ամիս անց՝ 1944 թվականի փետրվար 21-ին, իր խմբի 21 անդամների հետ միասին մահապատժի է ենթարկվել Փարիզի Սյուրեն արվարձանի Ֆորտ Մոն-Վալերյեն ամրոցում:

Մահապատժի օրը Մանուշյանը կնոջ ուղղված նամակում գրել է. «Ի՛նչ կարող եմ գրել քեզ: Ներսումս ամեն ինչ խառնված է, բայց միաժամանակ՝ պարզորոշ: Որպես կամավոր զինվոր ես միացել էի Ազատության բանակին և հիմա մեռնում եմ հաղթանակի և վերջնանպատակի սահմանագծին: Երջանկություն՝ նրանց, ովքեր կվերապրեն մեզ և կհամոտեսեն վաղվա ազատության և խաղաղության քաղցրությունը»:

**Միսաք Գևորգի Մանուշյան** (ֆր.՝ Missak Manouchian, Michel Manouchian], սեպտեմբերի 1, 1906, Ադիյաման, Խարբերդի վիլայեթ, Օսմանյան կայսրություն - փետրվարի 21, 1944, Ֆորտ Մոն Վալերիեն, Ֆրանսիա), հայ բանաստեղծ, ֆրանսիական դիմադրության շարժման մարտիկ, հակաֆաշիստ և Ֆրանսիայի ազգային հերոս: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Մանուշյանը եղել է եվրոպական ներգաղթյալներից, այդ թվում մեծաթիվ հրեաներից կազմված խմբավորման ղեկավար, որն իրականացրել է դիվերսիաներ ընդդեմ նացիստների: Կարծիք կա, որ Մանուշյանի խումբը եղել է ամենաակտիվը Ֆրանսիական դիմադրության շարժման ընթացքում: Մանուշյանն ու նրա ընկերներից շատերը ձերբակալվել են 1943 թվականի նոյեմբերին և 1944 թվականի փետրվարի 21-ին մահապատժի ենթարկվել նացիստների կողմից: Նա ճանաչվել է Ֆրանսիական դիմադրության շարժման հերոս:

Վաղ տարիներ

Միսաք Մանուշյանը ծնվել է 1906 թվականի սեպտեմբերի 1-ին Արևմտյան Հայաստանի Ադիյաման գյուղում, հայ գյուղացու ընտանիքում[16]: Հայրը զոհվել է 1915

թվականի Մեծ Եղեռնի ժամանակ, մայրը՝ գաղթի ճանապարհին: Միսաքը եղբոր հետ կարողացել է փրկվել և տեղահանված այլ հայերի հետ միասին հասնել Սիրիա: 1920 թվականից Լիբանանի Ճյունիա քաղաքի հայկական որբանոցի սաներ են: Այդ ժամանակ Լիբանանի տարածքը Ազգերի լիգայի մանդատով գտնվում էր Ֆրանսիայի տիրապետության տակ, և Մանուշյան եղբայները որբանոցում գտնվելու ընթացքում սովորում են ֆրանսերեն: 1925 թվականին տեղափոխվում են Ֆրանսիա՝ սկզբում Մարսել, ապա հաստատվում Փարիզում, որտեղ նա աշխատում է «Citroën» գործարանում որպես խառատային հաստոցի օպերատոր և զբաղվում ինքնակրթությամբ՝ հաճախելով գրադարան Փարիզի Լատինական թաղամասում: Գործարանում աշխատելու ընթացքում Միսաք Մանուշյանը միացել է Աշխատանքի համընդհանուր կոնֆեդերացիա (Confédération Générale du Travail, CGT) պրոֆսիոնալական արմատական միությանը: 1927 թվականին մահացել է Միսաք Մանուշյանի եղբայրը՝ Կարապետը: 1930-ական թվականների սկզբին, երբ սկսվել է համաշխարհային տնտեսական ճգնաժամը, Միսաք Մանուշյանը կորցրել է աշխատանքը: Ապրուստի միջոցներ վաստակելու համար նա աշխատել է որպես բնորդ քանդակագործների համար:

## Գրական և քաղաքական գործունեություն

Միսաք Մանուշյանը 1930 թվականին եղել է «Ֆրանսիացի-հայ նորագույն գրողների ընկերության» հիմնադիրների շարքում: Իր հայրենակից Սեմայի (Գեղամ Աթմաճյան) հետ միասին հիմնադրել է կոմունիստական կողմնորոշում ունեցող երկու գրական ամսագրեր՝ «Ջանք» և «Մշակույթ», որ քարոզում էին ձախակողմյան գաղափարներ և հայկական մշակույթի պահպանում տեղի հայերի շրջանում: Այդ ամսագրերում տպագրվել են ֆրանսիական գրականության ու հայկական մշակույթին նվիրված հոդվածներ: Միաժամանակ Մանուշյանն ակտիվորեն զբաղվել է թարգմանական գործունեությամբ՝ հայերեն թարգմանելով Բողլերի, Վեռլենի ու Ռեմբոյի ստեղծագործություններից, ինչպես նաև Սորբոն համալսարանում հաճախել է գրականությանը, փիլիսոփայությանը, պատմությանն ու քաղտնտեսությանը նվիրված դասախոսությունների:

1934 թվականին Մանուշյանը դարձել է Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության անդամ: 1935 թվականից մինչև 1937 թվականը նա խմբագրել է հայերեն «Չանգու» ձախակողմյան շաբաթաթերթը[20], որ եղել է հակաֆաշիստական, հակադաշնակցական, հակաիմպերիալիստական և քարոզել խորհրդային գաղափարներ:

1935 թվականից եղել է Հայաստանի օգնության կոմիտեի, իսկ 1937 թվականից կենտրոնական վարչության անդամ: 1935 թվականին՝ Հայաստանի օգնության կոմիտեի կազմակերպած երեկոներից մեկի ժամանակ Միսաք Մանուշյանը ծանոթացել է իր ապագա կնոջ՝ Մելինե Ասատրյանի հետ, ով նույնպես Մեծ Եղեռնի ժամանակ կորցրել էր ծնողներին և որբանոցում անցկացրած տարիներից հետո հայտնվել Ֆրանսիայում:

## Դիմադրության շարժում

Միսաք Մանուշյանն իր կնոջ՝ Մելինե Մանուշյանի հետ մասնակցել է Ֆրանսիական դիմադրության շարժման

ընդդեմ ֆաշիստական նվաճողների. նա եղել է «Ներգաղթյալների աշխատավորական ուժ» (ֆր.՝ *Main-d'œuvre immigrée*) մարտական խմբավորման հայկական բաժնի ակտիվիստ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի հայտարարման օրը՝ 1939 թվականի սեպտեմբերի 3-ին, Ֆրանսիայի իշխանություններն արգելել են Կոմունիստական կուսակցության գործունեությունը և ձերբակալել բազմաթիվ ակտիվիստների, այդ թվում նաև Մանուշյանին, որին ուղարկել են Սանտե բանտ: Մանուշյանի բնակարանում անցկացված խուզարկության ժամանակ առգրավվել ու ոչնչացվել են նրա շատ ձեռագրեր: Երեք ամիս անցկացնելով անազատության մեջ՝ Մանուշյանը՝ որպես արտասահմանցի, ուղարկվել է Նորմանդիայի Ռուան շրջան, որտեղ կրկին սկսել է աշխատել որպես խառատային հաստոցի օպերատոր: Գերմանական զորքերի՝ Ֆրանսիա ներխուժումից հետո Մանուշյանը ֆրանսիական բանակի նահանջող մնացորդների հետ տեղափոխվել է երկրի հարավ, սակայն հետո վերադարձել է Փարիզ կնոջ՝ Մելինեի կանչով, ով պատասխանատու էր տեղում Ֆրանսիայի կոմկուսի ընդհատակյա կազմակերպությունների միջև կապի կորդինացման համար:

Փարիզում Միսաք Մանուշյանը իր շուրջն է հավաքել հայ մտավորականներին (որոնց հետ նախկինում համագործակցել էր «Չանգու» ամսագրում)՝ նպատակ ունենալով կազմակերպել միջազգային ջրկատ Ֆրանսիական դիմադրության շարժմանը մասնակցելու և հակաֆաշիստական պրոպագանդա ծավալելու համար: 1941 թվականի հունիսի 22-ին՝ Խորհրդային Միության վրա գերմանացիների հարձակման օրը, գեստապոն ձերբակալել է Միսաք Մանուշյանին և նրա խմբավորման անդամներին: Մանուշյանն ուղարկվել է Կոմպիեն համակենտրոնացման ճամբար, որտեղ շարունակել է պայքարն ընդդեմ ֆաշիզմի՝ իր նոր ծանոթի՝ ֆրանսիացի մի բժշկի հետ կազմակերպելով ընդհատակյա կազմակերպություն:

Փախելով ճամբարից՝ Միսաք Մանուշյանը 1943 թվականի մարտին միացել է «Ստալինգրադ» ջրկատին (կոչվել է ի պատիվ Ստալինգրադի ճակատամարտի), որ ելթարկվում էր «Ազատ հրաձիգներ և ֆրանսիացի պարտիզաններ» կառույցին: Մանուշյանի առաջին զինված ակցիան, որ անցկացվել է Լեալուա Պերեում մարտի 17-ին, ավարտվել է անհաջողությամբ: 1943 թվականի օգոստոսին՝ Բորիս Գոլբանի պաշտոնազորկումից հետո (որի ջանքերի շնորհիվ միավորվել են էթնիկապես մեկուսացած խմբերը), Մանուշյանը ղեկավարել է երեք ջրկատ, որոնցում ընդգրկված էին ընդհանուր առմամբ շուրջ 50 մարտիկներ: Փարիզի շրջանում գործող բոլոր պարտիզանների ղեկավարությունն ստանձնել էր հրեական ծագմամբ լեհ կոմունիստ Յոզեֆ Էյշտեյնը (գնդապետ Ժի), որ եղել է Իսպանիայի քաղաքացիական պատերազմի վետերան:

1943 թվականի օգոստոսից Մանուշյանի ղեկավարած խումբը կատարել է մոտ 30 հաջող հարձակումներ գերմանական նվաճողների վրա, այդ թվում նաև լիկվիդացրել են Փարիզի պարել, մասսայական գնդակահարություններով «աչքի ընկած» գեներալ ֆոն

Շամբուրգի և ՍՍ շտաբարտենֆյուրեր Յուլիուս Ռիտերին, որ պատասխանատու էր 600 000 քաղաքացիական անձանց Գերմանիա հարկադիր աշխատանքի ուղարկելու համար:

## Կարմիր պլակատ

Մանուշյանի խումբը վարկաբեկելու նպատակով գերմանական օկուպացիոն ղեկավարությունը 15000 օրինակով տպագրել է ազիտացիոն պլակատ՝ տխրահոշակ «Կարմիր պլակատը», որը ցույց էր տալիս, որ գերմանացիների դեմ պայքարում են ոչ ֆրանսիացիները: Դրա վրա գրված է՝ Մանուշյան, խմբի ղեկավար, հայ, 56 հարձակում, 150 զոհ, 600 վիրավոր: Փորձելով ազդել մարդկանց շովինիստական զգացումների վրա՝ «Կարմիր պլակատի» միջոցով գերմանացի նվաճողները հասարակության ուշադրությունը սևեռել են Մանուշյանի ու նրա խմբի մյուս անդամների պլազգի լինելու և նրանց կոմունիստական համոզմունքների վրա: Նրանք հայտարարվել են ահաբեկիչներ, սակայն պրոպագանդան հակառակ էֆեկտն է ունեցել: «Մանուշյանի խումբն» իսկապես բազմազգ էր. նրա կազմում կային ութ լեհեր, հինգ իտալացիներ, երեք հունգարացիներ, երկու հայեր, մեկական իսպանացի և ռումինացի (Օլգա Բանչիկ), երեք ֆրանսիացիներ և տասնմեկ հրեաներ: Նրանք մեծ մասամբ սերում էին պրոլետարական ընտանիքներից, իսկ նրանց մի մասը հայրենի երկրից հեռացել էր գործազրկության և հակասեմական ճնշումների պատճառով:



Կարմիր պլակատը

«Մանուշյանի խմբում» ընդգրկված էին.

- Սելեստին Ալֆոնսո (*Celestino Alfonso*) – իսպանացի
- Օլգա Բանչիկ (*Olga Bancic*) – Բեսարաբիայի հրեա
- Իմրե Բեկեշ Գլաս (*Imre Békés Glasz*) – հունգարացի հրեա
- Յոզեֆ Բոչով (*József Bocsov*) – հունգարացի հրեա
- Վոլֆ Վայսբրոտ (*Wolf Wajsbrot*) – Լեհաստանի հրեա
- Ռոբերտ Վիչից (*Robert Witschitz*) – ֆրանսիացի
- Յոնաս Գեդուլդիգ (*Jonas Geduldig*) – Լեհաստանի հրեա
- Լեոն Գոլդբերգ (*Léon Goldberg*) – Լեհաստանի հրեա
- Շլամ Գրիվաչ (*Szlama Grzywacz*) – Լեհաստանի հրեա

- Ռինո Ղեյլա Նեգրա (*Rino Della Negra*) – իտալացի
- ժորժ Կլոարեկ (*Georges Cloarec*) – ֆրանսիացի
- Ստանիսլավ Կուբացկի (*Stanislas Kubacki*) – լեհ
- Արպեն Դավիթյան (*Arpen Tavitian*) – հայ
- Չեզարե Լուչարինի (*Cesare Luccarini*) – իտալացի
- Միսաք Մանուշյան (*Missak Manouchian*) – հայ
- Մարսել Ռայման (*Marcel Rayman*) – Լեհաստանի հրեա
- Ռոժեր Ռուկսել (*Roger Rouxel*) – ֆրանսիացի
- Անտոնիո Սալվադորի (*Antonio Salvadori*) – իտալացի
- Ամադեո Ուսեյլիո (*Amadeo Usseglio*) – իտալացի
- Մորիս Ֆինգերցվայգ (*Maurice Fingercwajg*) – Լեհաստանի հրեա
- Սպարտակո Ֆոնտանո (*Spartaco Fontano*) – իտալացի
- Վիլյի Շապիրո (*Willy Szapiro*) – Լեհաստանի հրեա
- Տամաշ Էլեկ (*Tamás Elek*) – հունգարացի հրեա:

Մանուշյանի ազդեցության տակ է իր գործունեությունը ծավալել նաև երիտասարդ Անրի Կրազյուկին (Կրասուցկի), ով հետագայում դարձել է ֆրանսիայի կոմկուսի քաղբյուրոյի անդամ և Աշխատանքի հանրնդհանուր կոնֆեդերացիայի գլխավոր քարտուղար:

### Ձերբակալություն և մահապատիժ

1943 թվականի նոյեմբերի 16-ի առավոտյան ֆրանսիական ոստիկանության աշխատակիցները ձերբակալում են Մանուշյանի խմբի անդամներին Էվրիում: Նրա կինը՝ Մեյինեն, կարողացել է փախչել ոստիկանությունից և մահվան է դատապարտվել հեռակա կարգով: Մանուշյանի խմբի հետ կապ ունենալու մեղադրանքով ձերբակալվել է ընդհանուր առմամբ 68 մարդ:

Մանուշյանը տանջանքների է ենթարկվել և երեք ամիս անց՝ 1944 թվականի փետրվար 21-ին, իր խմբի 21 անդամների հետ միասին մահապատժի է ենթարկվել Փարիզի Սյուրեն արվարձանի Ֆորտ Մոն-Վալերյեն ամրոցում:



Միսաք Մանուշյանի հուշարձան  
Մահապատժի օրը Մանուշյանը կնոջ ուղղված նամակում գրել է. «Ի՞նչ կարող եմ քեզ գրել, իմ մեջ ամեն ինչ

անորոշ է և միաժամանակ շատ պայծառ: Ես մտել էի ազատության բանակը որպես կամավոր զինվոր և ես մեռնում եմ երկու մատ հեռու հաղթանակից և նպատակից: Երջանկություն նրանց, ովքեր պիտի ապրեն մեզնից հետո և վայելեն վաղվա խաղաղության ու ազատության քաղցրությունը»:

Մանուշյանին հետմահու շնորհվել է Պատվո լեգեոնի շքանշան: Նրա և իր խմբի անունով անվանվել են փողոցներ և հրապարակներ Փարիզում, Մարսելում, Վալանսեում և Երևանում:

### Ստեղծագործություններ

Միսաք Մանուշյանի բանաստեղծությունները տպագրվել են սփյուռքահայ մամուլում 1930-ականների սկզբներից: Նրա վաղ շրջանի ստեղծագործություններում տիրապետող են անձնական մտածումներն ու ապրումները: Հետագայում նաև գրել է աշխատավոր մարդու ցավի ու բանվորական պայքարի, դեպի հայրենիք սիրո մասին: Նրա վաղ ստեղծագործությունները հավանության է արժանացրել Ավետիք Իսահակյանը, ով հյուրընկալվել է Մանուշյանի մոտ և ծանոթացել նրա բանաստեղծություններին:

Բազմաթիվ հայրենասիրական, քաղաքական և քնարական բանաստեղծությունների («Պայքար», «Ընդվզում», «Նամակ Հայաստանես», «Ամբոխի կանչը» և այլն) հեղինակ է:

« Յոգիս բուրվառ է մշտավառ, ուր կը ծխան սերերս համայն,  
Կը խնկարկեմ ես զայն կյանքի տաճարին  
մեջ հավերժական,  
Բազմահազար հավատացյալ  
ամբոխներու երեսն ի վեր,  
Ու կը ժողվեմ անոնց դեմքեն  
հավատամքի լույսեր տարբեր...  
- «Կյանքիս երգը»

### Հիշատակի հավերժացում

- 1947 թվականին (ետմահու) Փարիզում լույս է տեսել Միսաք Մանուշյանի բանաստեղծությունների ժողովածուն, որը վերահրատարակվել է Երևանում «Իմ երգը» (1956) խորագրով<sup>[22]</sup>:
- 1978 թվականի նոյեմբերի 4-ին Փարիզի Իվրի սյուր Սեն արվարձանի զինվորական գերեզմանոցում բացվել է Միսաք Մանուշյանի հուշարձան (բանդակագործ՝ Արա Հարությունյան):
- Երևանի ավագանու 2014 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ Երևան քաղաքի Արամի, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու փողոցների և Մաշտոցի պողոտայի միջանկյալ հատվածում ՀՀ շարքային քաղաքացիների կողմից անվանված «Մաշտոցի պուրակը» անվանակոչվել է Միսաք Մանուշյանի անունով<sup>[33]</sup>, ինչին դեմ են հանդես եղել բազմաթիվ քաղաքացիներ<sup>[34][35][36]</sup>:
- Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքում գտնվող թիվ 48 հիմնական դպրոցը 1963-1964 ուսումնական տարվանից կոչվում է Միսաք Մանուշյանի անունով<sup>[37]</sup>:

- Ֆրանսիայի Ռոնի սուլ Բուա քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը կոչվում է Միսաք Մանուշյանի անունով<sup>[38]</sup>:



Միսաք Մանուշյանի անվան խաչքար Գորիսում

- 2024 թվականին փետրվարի 21-ին՝ Միսաք Մանուշյանի և նրա խմբի անդամների մահապատժի 80-ամյակի օրը, նրա և կնոջ՝ Մելինեի աճյունները տեղափոխվել են Փարիզի Պանթեոն՝ ի պատիվ բոլոր օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ովքեր միացել են Դիմադրությանը հանուն Ֆրանսիայի ազատության

## Մելինե Մանուշյան

Մելինե Մանուշյանը (նոյեմբերի 13, 1913], Կոստանդնուպոլիս, Օսմանյան կայսրություն - դեկտեմբերի 6, 1989, Fleury-Mérogis, Ֆրանսիա], ֆրանսահայ գործիչ:



Դիմադրության մասնակից Միսաք Մանուշյանի կինը:

Ծնվել է 1913 թվականին Կ. Պոլսում: Հայոց Ցեղասպանության ժամանակ զրկվում է ծնողներից, մանկությունը անցկացնում որբանոցներում: Մինչև 1926 թվական ապրել է Մարսելում, 1934 թվականին ծանոթանում է ապագա ամուսնու հետ: Սոս հարաբերությունների մեջ է եղել Շառլ Ազնավուրի ընտանիքի հետ:

Միսաք Մանուշյանի՝ կնոջն ուղարկած վերջին նամակի բնօրինակը պահվում է Կոնգրեսի գրադարանում, Վաշինգտոն: Լուի Արագոնը, ոգեշնչված Մանուշյանի վերջին նամակից՝ ուղղված կնոջը, գրել է «Տողեր՝ հիշատակի համար» (Strophes pour se souvenir) բանաստեղծությունը:

Միսաք Մանուշյանի մահապատժի իրագործումից հետո Մելինեն խուսափեց ֆաշիստական կալանքից և ողջ

մնաց պատերազմում: Նա այլևս երբեք չամուսնացավ և երեխա չունեցավ: 1954 թվականին Մելինե Մանուշյանը գրում է ամուսնուն նվիրված հուշեր, որոնց հիման վրա նկարահանվել է ֆիլմ 1985 թվականին:

## «Չանգու» բանվորական շաբաթաթերթը



«Չանգու», հասարակական-քաղաքական շաբաթաթերթը լույս է տեսել Փարիզում, 1935–1937 թվականներին: Խմբագիր՝ Միսաք Մանուշյանն էր, այն Ֆրանսահայ կոմունիստների թերթը:

Պաշտպանել է հայ գաղութի աշխատավորների շահերը, օգնել բարձրացնելու նրանց դասակարգային գիտակցությունը և համախմբելու հայ աշխատավորներին երկրի բանվորական կազմակերպությունների հետ: Մեծ դեր է խաղացել գաղութի և խորհրդային Հայաստանի կապերն ամրապնդելու գործում: Լայնորեն լուսաբանել է խորհրդային Հայաստանի կյանքը, նրա նվաճումները, օգնել հայրենադարձության գործին, ՀՕԿ-ի և առաջադիմական կազմակերպությունների աշխատանքներին: Թերթը ձգտել է տեղյակ պահել իր ընթերցողներին միջազգային քաղաքական իրադարձություններին, քարոզչություն է ծավալել ֆաշիզմի և պատերազմի օրեցօր սպառնացող վտանգի դեմ:

Թերթին աշխատակցել են Գ. Թահմազյանը, Դ. Դավիթյանը, Տ. Չավենը, Յ. Գալճյանը, Չ. Որբունին, Ե. Թուլայանը, Ա. Կոթիկյանը, Ե. Զոչարը և ուրիշներ:

## ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆԻ ՆԱՄԱԿՆ ԻՐ ԿՆՈՋԸ՝ ՄԵԼԻՆԵՆ

Ֆրանսահայ քաղաքական և գրական գործիչ Միսաք Մանուշյանը Ֆրանսիայում հակաֆաշիստական դիմադրական շարժման առաջամարտիկներից էր: 1934-ից Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության, Կոմունիստական դիմադրական շարժման և Ներգաղթյալների աշխատավորական ուժի (Main-d'œuvre immigrée) անդամ էր:



Ընդհատակյա «Ֆրանսիացի հրաձիգներ և պարտիզաններ» շարժման կազմում Մանուշյանը գլխավորում էր Ֆրանսիայում ապրող տարբեր ազգերի ներկայացուցիչներից բաղկացած խումբը, որ ակտիվ (հաճախ զինված) պայքար էր մղում Ֆրանսիան բռնազավթած ֆաշիստական Գերմանիայի դեմ: Մանուշյանի խումբը ֆաշիստական զորքի գործունեությունը խոչընդոտելու նպատակով կազմակերպում էր բարձրաստիճան զինվորականների սպանություններ, գործարանների հրկիզումներ, շարքից հանում էր գնացքներ, իտալերեն, հայերեն, հունգարերեն և այլ լեզուներով հրատարակում ընդհատակյա թերթեր:

1943-ին Մանուշյանի և խմբի մյուս անդամների հետապնդման ժամանակ Մանուշյանի կնոջը՝ Մելինե Մանուշյանին հաջողվել է փախչել: Միսաք Մանուշյանի գործունեության մասին վավերագրությունների մեծ բաժին մեզ հասանելի են դարձել պատերազմից հետո Մելինեի հրապարակած «Մանուշյան» գրքի շնորհիվ: Հենց այս գրքի հիման վրա է 1985-ին ռեժիսոր Մոսկո Բուկոն նկարահանել «Թռչակի անցած ահաբեկիչները» (Des terroristes à la retraite) փաստավավերագրական ֆիլմը: Մանուշյանի խմբի գործունեությունը ներշնչանքի և ակնածանքի աղբյուր է հանդիսացել ազատությունը և խաղաղությունը մտահոգ շատ մտավորականների և արվեստագետների համար:

Միսաքի նամակները ևս կարևոր սկզբնաղբյուր են իր դավանած արժեքների մասին: Մելինեին ուղղված այս վերջին նամակը, որի թարգմանությունը (Ֆրանսերենից) ձեզ ենք ներկայացնում, Միսաքի հրաժեշտի ու ափսոսանքի խոսքն է, բայց նախ և առաջ պատերազմի անհրաժեշտ ավարտի, կյանքի ու բնության հանդեպ սիրո և խաղաղության երազանքի իր ըմբռնումների մասին է:

## ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ ՓԱՐԻՉԻ ԵՐԴԿԱԼՆԵՐԻ ԱՏՅԱՆՈՒՄ

### Տիկին Մելինե Մանուշյանի ունկնդրությունը

ԹԱՐԳՄԱՆԻՉ ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿՅԱՆ

(Տիկին Մելինե Մանուշյանի ունկնդրությունը: Երդման արարողություն:)

ՆԱԽԱԳԱՅ – Պաշտպան Լեկլե՛րկ, ի՞նչ հարց եք ուզում տալ վկային:

ՊԱՇՏՊԱՆ ԼԵԿԼԵՐԿ – Պատասխանը միանշանակ է, պարոն նախագահ: Նախ ես ուզում եմ ձեզ ներկայացնել տիկին Մանուշյանին, նրա ներկայությունը մեզ համար խիստ կարևոր է: Դուք հավանաբար հիշում եք կարմիր որմազը, որը դիմադրության տարիներին հայտնվել էր Փարիզի փողոցներում ու բառացիորեն ազդարարում էր. <<Ահա՛ վկայությունը այն բանի, որ եթե ֆրանսիացիները թալանում, պայթեցնում, վնասում, սպանում են, ապա օտարազգիները՝ գործազուրկներն ու ոճրագործներն են նրանց ղեկավարում...>>:

Այդ ազդի տակ նշված է մարտախմբի հրամանատարի՝ Միսաք Մանուշյանի անունը, որը հիսունվեց գրոհ է կազմակերպել, 150 ֆաշիստական բռնազավթիչ շարքից հանել:

Մի քանի օր առաջ հանրապետության նախագահը պաշտոնապես հայտարարեց, որ ինքը ակնկալում է, որ կառավարությունը համապատասխան հանձնարարականներ տա, որպեսզի փետրվարին առանձնակի շուքով նշվի Միսաք Մանուշյանի՝ դիմադրության շարժման նշանավոր հերոսներից մեկի զոհվելու 40-ամյակը: Ուրեմն, տիկին Մանուշյանը հայուհի է: Ես կուզեի, որ նա մեզ տեղեկացներ, թե ինչո՞ւ է դատարան եկել եւ ի՞նչ է ուզում ասել:

ՄԱՆՈՒՇՅԱՆ – Ես եկել եմ հայտնելու, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ որբացել, երկրորդի ժամանակ այրիացել եմ: Ահա՛, մի նախադասությամբ, իմ կենսագրությունը: Մենք՝ երեք, չորս, հինգ տարեկան հայ որբերս դեպքերից առաջ խաղում էինք թուրք, հույն, հրեա, այլ ազգության երեխաների հետ, դրսում՝ թուրքերեն, տանը՝ մեր մայրենի լեզվով էինք խոսում:

Մենք ի հարկե չիմացանք, թե ինչո՞ւ, ինչպե՞ս սկսվեց պատերազմը, բայց զգացինք, որ մի շատ կարեւոր բան փոխվեց՝ թուրք մանուկները սկսեցին մեր հետեւից քարեր շարտել: Մենք զարմացանք եւ երբ հայտնեցինք մեր ծնողներին, նրանք ասացին. <<Դուք էլ նույնն արեք>>: Ուրեմն համաշխարհային մեծ պատերազմում մենք ունեինք մեր փոքրիկ պատերազմը, որը դրանով չավարտվեց: Մեզ՝ հայ որբերիս հավաքեցին Ադաբազարի ամերիկյան որբանոցում, որի դաստիարակները հայեր էին: Ավելի ուշ, երբ թուրքական կառավարությունը հրահրեց Չմյուռնիայի հրդեհը, մեր տնօրինությունն զգաց, որ ապահով չենք, մեզ Հունաստան՝ մի ուրիշ ամերիկյան որբանոց տեղափոխեց, որտեղից էլ 1926-ին եկանք Ֆրանսիա ու հայկական մանկատան սաներ դարձանք: ՊԱՇՏՊԱՆ ԼԵԿԼԵՐԿ – Ես ուզում եմ ձեզ հարցնել, թե ամուսնանալուց հետո ինչո՞ւ եք դուք եւ ձեր ամուսինը՝ Մանուշյանը դիմադրական շարժմանը նվիրվել:

ՄԱՆՈՒՇՅԱՆ – Իմ ամուսինը նույնպես Առաջին համաշխարհային պատերազմի որբերից էր, նրան երկրորդ համաշխարհային պատերազմում, ինչպես գիտեք, գնդակահարեցին ևացիստները: Մենք զինվորագրվեցինք դիմադրական շարժմանը, որովհետեւ նախ երախտապարտ էինք այն երկրին, որտեղ հանգրվանել էինք, բացի այդ՝ տեսնում էինք, որ կրկնվում էր այն ամենը, ինչ տեղի էր ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Մեզ՝ հայերիս համար, Թալեաթը ևացիստ էր: Ավելի մանրամասնեմ՝ չէինք կարող չպաշտպանել Ֆրանսիան, որը մեզ համար արտասովոր երկիր էր, երկիր, որտեղ մեզ չէին ձերբակալում, չէին տանջում, որտեղ ժողովրդավարությունն էր գերիշխում: Իսկ ևացիզմը, ևացիզմը գաղափարախոսություն չէ, անասնական բնագոյ է, մենք փաստորեն ականատես էինք լինում 20-րդ դարի երկրորդ ցեղասպանությանը: Ահա՛ թե ինչու ես ու Մանուշյանը իրար հետ խորհրդակցելուց հետո դիմադրության շարքերն անցանք հենց առաջին օրվանից ու կռվեցինք մինչեւ 1943-ի նոյեմբերի 15-ը, երբ ամուսինս ձերբակալվեց ու գնդակահարվեց... Նրանց դատավարության ժամանակ դատարանի դահ-

լիճում կային ֆրանսիական լրտեսներ, ինչպես նաև Գեստապոյի գործակալներ, որոնք Մանուշյանի մարտիկներին <<ոճրագործներ>> էին կոչում: Ամուսինս, որ երկար ժամանակ չէր կորցնում պաղարյունությունը, ի վերջո դահլիճ շրջվեց ու ասաց. <<Գեստապոյի գործակալների դեմ ես ոչինչ չունեմ, մենք պայքարել ենք եւ այժմ ձերբակալվել, բայց դո՛ւք՝ ֆրանսիացի լրտեսնե՛ր, ձեր խիղճն ու հոգին ծախել եք թշնամուն: Դուք սոսկ ժառանգել եք ֆրանսիական քաղաքացիությունը, այսօր մենք դրան արժանանում ենք>>:

Այո՛, նա կռվում էր Ֆրանսիայի համար, չունենալով ֆրանսիական հպատակություն:

**ՊԱՇՏՊԱՆ ԼԵՎԵՐԿ** – Դուք ձեր հուշերի գրքում նկարագրել եք՝ երբ Մանուշյանը ընդհատակ անցավ, ինչի՞ մասին էր մտածում...

**ՄԱՆՈՒՇՅԱՆ** – 1936, թե 37 թվականին էր, մենք մեկտեղ դիտեցինք <<Ես դատապարտում եմ>> շարժանկարը, որտեղ Վիկտոր Ֆրանսենը մի անծայրածիր գերեզմանոցում հիշում էր Առաջին համաշխարհային պատերազմի զոհերին, մրմնջում. <<Ես դատապարտում եմ, ես դատապարտում եմ...>>: Մանուշյանն ասաց. <<Հիշեցի հորս, որը զենքը ձեռքին գևաց, որպեսզի կռվի Թալեաթի կառավարության դեմ, պաշտպանի հայ ժողովրդին>>: Իրոք, ցեղասպանությունն արդեն սկսվել էր, նրա հայրը ընկնում է մարտի դաշտում, մայրը խողիտովում է իր երեխաների ոտքերի առջև: Մանուշյանը պատմում էր. <<Ես հիշեցի այս ամենն ու նույնպես նետեցի ֆաշիստների վրա, տեսա մորս ընկնելը, հորս ընկնելը եւ նետեցի նույնակը: Այդ պահին մտապատրանք ունեցա՝ ինչ-որ մեկը դրոշում էր ինձ. <<Կրակի՛ր, դու իրավունք ունե՛ս, կրակի՛ր, դու սպանում ես մա՛հը, դու սպանում ես թշնամու՛ն, նացիստների՛ն...>>: Այդպե՛ս ես գրոհեցի եւ ասես ուսերիցս մի մեծ բեռ ընկավ, զգացի, որ հերոսություն եմ անում, հետեւում եմ հորս, ես միշտ կհետեւեմ նրան, ֆրանսիացի ժողովրդին, ազատության բոլոր մարտիկներին>>:

Այդպե՛ս է իմ ամուսինն սկսել իր պայքարը, նա 125 բռնարարք է կատարել, բայց ոչ մի ֆրանսիացու չի վնասել, եթե նկատի չունենանք ժան Զերոլի նման այն մի քանի դավաճաններին, որոնք իրենց հայրենակիցներին Գեստապոյին էին հանձնում: Մանուշյանը մարտնչել է միայն Գեստապոյի՝ այն գերմանացիների դեմ, որոնք եկել էին Ֆրանսիան ծնկի բերելու համար:

**ՊԱՇՏՊԱՆ ԼԵՎԵՐԿ** – Ի՞նչ էր ձեզ գրել Մանուշյանն իր վերջին նամակում:

**ՄԱՆՈՒՇՅԱՆ** – Նա գրել էր՝ <<Թանկագի՛ն Մելինե, շատ սիրելի որբուկս>>, ցանկանալով նշել, որ ես երկրորդ անգամ որբանում եմ: Ապա ավելացրել էր. <<Ես գերմանացի ժողովրդի դեմ ոչինչ չունեմ, համոզված եմ, որ բոլոր ժողովուրդներն էլ խաղաղ կգոյակցեն գերմանացիների հետ, պատերազմը երկար չի տևի, երջանկությունն ամենուր կիշխի>>:

**ՊԱՇՏՊԱՆ ԼԵՎԵՐԿ** – Ի՞նչ կուզեիք ասել մեղադրվող երիտասարդներին:

**ՄԱՆՈՒՇՅԱՆ** – Ի հարկե, ես ոչ մի իրավասություն չունեմ պնդելու՝ նրանք ճիշտ են, թե՞ սխալ, բայց վստահ եմ, որ ահաբեկիչներ չեն, ազատամարտիկներ չեն, ինչպես մենք: Ես նրանց կուզեի ասել. <<Նայե՛ք աչքերիս, զո՛ւսայ եղեք, մի՛ պարզեք ձեր բռունցքները, որովհետև

այս ամենը դեռ հաղթանակ չէ, ուղղակի հայ ժողովուրդը չի՛ կորցրել արժանապատվությունը, նա դեռ կանգո՛ւն է, պայքարո՛ւմ է: Եվ քանի որ ֆրանսիայի Զանրապետության նախագահը պաշտոնապես հայտարարեց, որ ցեղասպանություն տեղի է ունեցել, ուրեմն դուք կարող եք ձեզ բավարարված զգալ: Առաջին քայլը կատարված է, ճիշտ է, այն փոքր է, բայց ես վստահ եմ, որ ուրիշները կհաջորդեն, եւ հայ ժողովուրդը հատուցում կստանա, արդարությունը կվերականգնվի: Պահպանե՛ք ձեր ոգին, մի՛ կորցրեք կորովն ու հույսը>>:

Ինձ թվում է, որ հարկ չկա Ֆրանսիայում բռնարարքները շարունակել, որովհետեւ եթե հանրապետության նախագահն ընդունել է, շատերը կհետեւեն նրա օրինակին: Դրա համար ես ձեզ խնդրեցի՝ <<Մի՛ կորցրեք հույսն ու կորովը>>: Ուզում եմ ավելացնել նաեւ, որ ճիշտ է, մենք բոլորս ձեր մայրերն ու տատիկներն ենք, բայց դուք ունեք մի այլ մայր՝ Զայրենիքը եւ հայ ժողովուրդը, որոնք ձեր հետ են:

Փորձեմ պատասխանել նաեւ բոլոր նրանց, ովքեր հայտարարում են, որ ցեղասպանություն չի եղել: Այն, ինչ ասելու եմ, ուսումնասիրել եմ անձամբ: Դեռ ցեղասպանությունը Թուրքիայում սկսվեց, ֆրանսիացի մեծ գրող Անատոլ Ֆրանսը, – նա կարո՞ղ էր ստել, – ազդարարեց. <<Մեր հայ եղբայրներին սպանում են, ցեղասպանություն է սկսվել, ինչո՞ւ ենք լռում, ինչո՞ւ նրանց չենք պաշտպանում>>: Երբ ես աշխատում էի նման վկայություններ ընդգրկող գրքի վրա, մտածում էի. <<Եթե ամբողջ աշխարհն այսպես վարվեր, ո՞վ գիտե, թերեւս երկրորդ ցեղասպանությունը տեղի չունենար>>:

Ճիշտ է, ես ինքս մարմար շատ եմ սիրում, բայց ստիպված եմ խոստովանել, որ մարդկության մեծամասնությունը մարմարի պես սառն ու անտարբեր մնաց: Զգիտեմ էլ ինչ ասեմ, ես շատ հուզված ու հիվանդ եմ, բայց դուրս եմ եկել անկողնուց, որ սեփական աչքերով տեսնեմ այս չորս հայ տղաներին:

**ՊԱՇՏՊԱՆ ԼԵՎԵՐԿ** – Շնորհակալություն: **ՆԱԽԱԳԱՐ** – Ո՞վ է ցանկանում հարց ուղղել տիկին Մանուշյանին: Դո՛ւք, պարոն ընդհանուր պաշտպա՛ն: Ո՛չ:

**ՄԱՆՈՒՇՅԱՆ** – Իրավունք ունե՛մ, կարո՞ղ եմ սեղմել չորսի ձեռքը:

**ՆԱԽԱԳԱՐ** – Որպես բացառություն՝ այո՛, բայց կուզեի, որ նման միջադեպեր չկրկնվեին:

(Տիկին Մանուշյանը սեղմում է մեղադրյալների ձեռքը, հեռանում):

## Մահվան հետ պայքարի միակ խնդիրը կյանքն է. Միսաք Մանուշյան

ԵՐԵՎԱՆ, 21 ՓԵՏՐՎԱՐԻ, 2023 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԵՆԴՐԵՍ: «Ի՞նչ կարող եմ քեզ գրել, իմ մեջ ամեն ինչ անորոշ է եւ միաժամանակ շատ պայծառ: Ես մտել էի ազատության բանակը որպես կամավոր զինվոր եւ ես մեռնում եմ երկու մատ հեռու հաղթանակից եւ նպատակից: Երջանկությունն նրանց, ովքեր պիտի ապրեն մեզից հետո եւ վայելեն վաղվա խաղաղության ու ազատության քաղցրությունը»:





Միսաք Մանուշյան

Մահվան հետ պայքարի դառնությունը Միսաք Մանուշյանը ճանաչել էր մանկությունից եւ վաղ հասակացել կյանքը պահպանելու դժվարությունը ու կյանքի ընթացքում գնահատել ապրելու եղբայրները, այն, որ կյանքը չափվում է ոչ թե ժամանակով, այլ օգտագործելով: Որք մանուկին ծանոթ երազանքը, որի մասին արտահայտվել էր չափածո տողերով՝ եղբոր հետ միասին որբանոցում դառն օրեր անցկացրած ապագա բանաստեղծն ու ազատության մարտիկը, չէր լքում նրան կյանքի դրամատիկ ճանապարհին, անգամ մահապատժի օրը, երբ կնոջը՝ Մելինեին գրած նամակում նրան քնքշորեն անվանում է «փոքրիկ սիրասուն որբուկս»: Անես, գնում էր ոչ թե մեռնելու, այլ դիմավորելու լուսաբացը, որ ողջ գիշեր եղել էր հիասքանչ փոքրիկ երեխայի մտքում, ով հույս ուներ, որ լուսաբացը կլինի մանուշակագույն ու կգար դարձի վարդերի փնջով: Այն երեխայի, ում հորն սպանել էին թուրքերը Մեծ եղեռնի ժամանակ, իսկ մայրը վախճանվել էր գաղթի ճանապարհին:

Միսաքը ավագ եղբոր՝ Կարապետի հետ ոտքով Թուրքիայից փախչում է Սիրիա, որտեղ էլ ապաստան են գտնում որբանոցում, սովորում հայերեն, ֆրանսերեն, թարգմանում ֆրանսիական գրականություն, այնուհետեւ կյանքը շարունակում Ֆրանսիայում: Ողբերգական ճակատագիրը, սակայն, հետապնդում էր եղբայրներին: Կարապետին բուժելու եւ գոյություն պահպանելու համար Միսաքն սկսում է աշխատել որպես խառնատային հաստոցի օպերատոր՝ չմոռանալով այցելել գրադարան: Եղբորը փրկել չհաջողվեց: Կարապետը վախճանվեց 1927 թ.: Կյանքը երես չէր տալիս Մանուշյանին, բայց նա գտնում էր ելքեր: 30-ականների համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին, երբ կորցրել է աշխատանքը, սպորտային բարեկազմությունն օգնել է վաստակել՝ քանդակագործներին բնորոշելով: Այնուամենայնիվ, նրա համար հայապահպանության խնդիրը մշտական ուշադրության առարկա էր: 1930 թ. Մանուշյանը դարձավ «Ֆրանսիացի-հայ նորագույն գրողների

ընկերության» հիմնադիրներից, Գեղամ Աբամաճյանի (-Սեմա) հետ սկսեցին հրատարակել՝ կոմունիստական կողմնորոշմամբ, «Ջանք» եւ «Մշակույթ» գրական ամսագրերը, որտեղ հրատարակվում էին ֆրանսիական ու հայկական գրական-մշակութային գործեր, կատարվում թարգմանություններ: 1934 թ. Մանուշյանն անցնում է Ֆրանսիայի կոմկուսի շարքերը եւ 1935-37 թթ. խմբագրած «Ջանգու» շաբաթաթերթում արձարծում հակաֆաշիստական, հակադաշնակցական, հակաիմպերիալիստական, խորհրդային գաղափարներ, 1935 թ. դառնում Հայաստանի օգնության կոմիտեի, իսկ 1937-ից՝ կենտրոնական վարչության անդամ, կոմիտեի կազմակերպած երեկոյի ժամանակ էլ ծանոթանում իր նման Մեծ եղեռնից հրաշքով փրկված, որբանոցում անցկացրած կյանքից հետո Ֆրանսիայում հայտնված ապագա կնոջ՝ Մելինե Ասատրյանի հետ: Առանձին անցկացրած կյանքի միեւնույն ճանապարհները այդուհետ պիտի միատեղվեին ֆաշիզմի դեմ անգիջում պայքարում:

1939 թ. սեպտեմբերին, երբ հայտարարվեց Երկրորդ համաշխարհայինը, Ֆրանսիայում փոխվեց իրավիճակը, արգելվեց կոմկուսի գործունեությունը, ձերբակալվեցին նրա ակտիվ անդամները: Մանուշյանին ուղարկեցին Սանտե բանտ: Այնուհետեւ Մանուշյանի պայքարը ֆաշիզմի դեմ ոչ թե նահանջել, այլ առավել է խորացել. նրան հաջողվել է հավաքագրել ոչ միայն հայերի, այլեւ հրեաների ու այլազգիների՝ դառնալով ֆաշիզմի սարսափը Ֆրանսիայում: Նրա խումբը վարկաբեկելու համար գերմանացիներն անգամ 15 հազար օրինակով ագիտացիոն՝ «Կարմիր պլակատ» են հրատարակել՝ շեշտելով, թե Գերմանիայի դեմ պայքարում են ոչ թե ֆրանսիացիներ, այլ այլազգիներ՝ օրինակ բերելով Մանուշյանին՝ խմբի ղեկավար, հայ, 56 հարձակում, 150 զոհ, 600 վիրավոր, սակայն պլակատը սպասված արդյունքի չի հանգեցնում: Այլ բան չէր մնում, քան ձերբակալել ու հաշվեհարդար տեսնել «ահաբեկիչների» հետ: 1943 թ. նոյեմբերի 16-ի առավոտյան Էվրիում ֆրանսիական ոստիկանության աշխատակիցները ձերբակալում են Մանուշյանի խմբի 68 անդամների: Կինը՝ Մելինե Մանուշյանը, կարողանում է փախչել եւ մահվան է դատապարտվում հեռակա կարգով, ում նկատմամբ մահապատիժը այդպես էլ չի իրականանում: Երեք ամիս շարունակ Մանուշյանը տանջանքների է ենթարկվում բանտում, եւ 1944 թ. փետրվարի 21-ին խմբի 21 անդամների հետ գնդակահարվում Փարիզի Սյուրեն արվարձանի Ֆորտ Մոն-Վալերյեն ամրոցում: Օլգա Բանչիկը մահվան դատապարտվածների մեջ միակ կինն էր, ում հետ վարվում են առավել դաժանաբար. նրան փոխադրում են Գերմանիա եւ գլխատում Շտուտգարտի բանտում:

Ֆրանսիայի ազգային հերոս, հայազգի Միսաք Գեղորգի Մանուշյանն ընտրել էր կյանքը ու հենց հանուն կյանքի էլ ընդունեց մահվան մարտահրավերը. նրա համար կարեւոր չէր՝ ում կյանքի համար է պայքարում, կարեւորը մարդկությանը երջանկացնելն էր. «Մահվան հետ պայքարի միակ խնդիրը կյանքն է»: Նա իր մարտիկներին վստահեցնում ու քաջալերում էր՝ ասելով. «Դուք վնաս չեք տալիս, դուք միայն սպանում եք մարդասպաններին»:

**Էլենուորա ՆԵՐՍԻՍՅԱՆ**

## Քարվաճառի Ծար գյուղի Սուրբ Սարգիս և Սուրբ Գրիգոր եկեղեցիները՝ աղբրեջանական մշակութային վանդալիզմի հերթական զոհ



Համացանցում հայտնվել է աղբրեջանցիների կողմից իրականացվող մշակութային վանդալիզմի հերթական փաստն ապացուցող հրապարակումը: Համաձայն այդ հրապարակման՝ Քարվաճառի շրջանի Ծար գյուղի Սուրբ Գրիգոր և Սուրբ Սարգիս եկեղեցիների տարածքում (այսօր աղբյուրում վերջիններս ներկայացվում են որպես աղվանական) իրականացվելու են պարսպապատման և վերանորոգման աշխատանքներ: Այս մասին տեղեկացնում է «Պատմամշակութային ժառանգության Գիտահետազոտական Կենտրոն» ՊՈԱԿ-ից: Լուսանկարներից պարզ է դառնում, որ եկեղեցու տարածքում արդեն իսկ սկսվել են շինարարական աշխատանքները. հանվել են Սուրբ Սարգիս եկեղեցու խաչը, արձանագիր քարերից մեկը, եկեղեցու տարածքից բացակայում են նաև խաչքարերի բեկորները: Սուրբ Գրիգոր եկեղեցու տարածքում քանդվել են նաև մինչև 1993 թվականը տեղի թրքացած քուրդ ընտանիքի կողմից արված կցակառուցումները:

### Աղբրեջանցի վանդալները թիրախավորել են օկուպացված Կրկժանի Սբ. Ամենափրկիչ եկեղեցին. monumentwatch.org

15.03.2024

Կրկժանի Աղբրեջանական Ictimai TV հեռուստաալիքով մարտի 8-ին ցուցադրվեց մի տեսանյութ, որը նկարահանվել է օկուպացված Ստեփանակերտ քաղաքի Կրկժան թաղամասում: Տեսանյութը ներկայացնում է Կրկժանում գտնվող ավերակված Սբ. Ամենափրկիչ եկեղեցին: Տեսանյութը վերնագրված է որպես «Խանքենդիում քանդված աղվանական հուշարձանները»: Գրում է monumentwatch.org-ը:

Տեսանյութն ակնհայտ քարոզչական բնույթ ունի. այն միտված է ծառայելու աղբրեջանական քարոզամեթոդային առաջ քաշած հիմնական թեզին, որ «հայերը հայկականացրել են տեղի աղվանական եկեղեցիները»: Այս թեզն, իհարկե, նոր չէ, սակայն վերնագրից տեսնում ենք, որ ի հայտ է եկել մեկ այլ վտանգավոր խոսույթ՝ այն է, որ հայերը իբր նաև քանդել են աղվանական հուշար-

ձանները: Այս տեսանյութը նաև սկսում են տարածել աղբրեջանական սոցցանցերում՝ Խանքենդիում քանդված, ոչնչացված աղվանական հուշարձանները վերտառությամբ:



Տեսանյութում չկա և ոչ մի տեղեկատվություն ավերակների մասին, անգամ հիմնավորում, թե երբ է քանդվել հուշարձանը, ինչու է այն ավերակ:

Տեսանյութում ներկայացված ավերակները գտնվում են օկուպացված Ստեփանակերտ քաղաքի «Կրկժան» թաղամասում՝ նրա բարձրադիր տեղավայրում (նկ. 1, 2): Համաձայն հուշարձանի պահպանության գոտու փաստաթղթերի՝ ավերակ եկեղեցին կոչվել է Սբ. Ամենափրկիչ: Ժամանակակից Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում 19-րդ դարում գտնվում էին Վարարակն, Կրկժան, Փահլու, Ներքին շեն, Սողոմոնի շեն և այլ հայկական գյուղերը, որոնց մասին վկայություններ են պահպանվել 19-րդ դարի աղբյուրներում: Այս թեմայով տես՝

Ստեփանակերտի մասին Աղբրեջանի անհիմն հայտարարությունների շուրջ:

Կարող ենք տեսնել, որ Կրկժանն այդ գյուղերից մեկն էր: Մակար Բարխուդարյանցը հիշատակում է գյուղը Կարկաժան անվամբ: Բարխուդարյանցը տեղի բնակիչներին բնորոշում է որպես բնիկ, իսկ գյուղի եկեղեցին հիշատակում է Սբ. Ամենափրկիչ, որի քահանան գալիս էր հարևան Ղայթալուշենից (Բարխուդարյանց 1895, 152): Այսպիսով, 19-րդ դարավերջին եկեղեցին կանգուն էր, իսկ գյուղի բնակիչները հիշատակվում են որպես բնիկ հայկական:

Ներկայումս եկեղեցին ավերակ է: Մասամբ պահպանվում են արևմտյան, հյուսիսային և արևելյան պատերի մնացորդները (նկ. 3): Այն հյուսիսից, արևմուտքից և արևելքից հենվում է ժայռերի վրա, ունեցել է խիստ լայն պատուհաններ, որ բնորոշ են 19-րդ դարի եկեղեցիներին: Կառուցված է կոպտատաշ կրաքարերով, շաղախով տեղի ժայռի վրա:

Հուշարձանի շրջակայքում կան մի քանի խաչքարերի բեկորներ, որոնք ցուցնում են, որ ներկայիս եկեղեցուց առաջ այստեղ եղել է մեկ այլ՝ ավելի վաղ ժամանակների եկեղեցի կամ սրբավայր, որի տեղում թերևս 19-րդ դարում կառուցվել է ներկայիս եկեղեցին: Դատելով խաչ-

քարերի բեկորներից՝ դրանց 12-13-րդ դարերի են (նկ. 4): Տարածքում կան նաև տապանաքարերի բեկորներ, ամբողջական տապանաքարեր՝ հայերեն արձանագրություններով: Համաձայն արձանագրության՝ տապանաքարերից մեկը ոմն Յուստինիանոսի է, ով վախճանվել է 1870 թվականին (նկ. 5):

Այսպիսով, գործ ունենք Կրկման գյուղի Սբ. Ամենափրկիչ եկեղեցու հետ, որ կառուցվել է 19-րդ դարում: Եկեղեցու շուրջը տարածվել է գերեզմանատունը, իսկ եկեղեցու տարածքից գտնված խաչքարերի բեկորները ցուցում են տեղում ավելի վաղ առկա եկեղեցու կամ սրբավայրի մասին:

Խորհրդային տարիներին, Կրկման գյուղում և եկեղեցու շրջակայքում բնակեցրել են մեծ թվով աղբբեջանցիների: Վերջիններս եկեղեցին վերածել էին անասնազոմի և ավերակ դարձրել: Փաստորեն 19-րդ դարում հայկական գյուղում կառուցված հայկական եկեղեցին, որ աղբբեջանցիները խորհրդային տարիներին վեր են ածել անասնազոմի, աղբբեջանական պրոպագանդայի համար աղվանական եկեղեցի է՝ ավերված հայերի կողմից:

Օգտագործված գրականություն  
Բարխուտարեանց 1895 - Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու:

### Սուտ են ասում, թե ՀԱՊԿ-ը մեզ դավաճանել է. մեզ առաջարկվել է փաթեթ, որը ենթադրում էր նաեւ զենքի մատակարարում. փորձագետ

23.02.2024



ՀԱՊԿ-ը հայ-ռուսական ռազմավարական ռազմական համագործակցության մի ձևաչափ է ընդամենը: Այս մասին NEWS.am-ի հետ զրույցում նշեց ռազմական փորձագետ Դավիթ Ջամայանը:

«ՀԱՊԿ-ին անդամակցելով Հայաստանը գործարանային գներով անխափան սպառազինության մատակարարումների հարցն է լուծել:

Երբ ասում են՝ ՀԱՊԿ-ը մեզ դավաճանել է, սուտ են ասում, 2022-ին առաջարկվել է օգնության փաթեթ, որը ենթադրում էր նաեւ զենքի մատակարարում: ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը իր պաշտոնը թողնելուց առաջ հայտարարեց, որ մենք պատրաստ էինք Հայաստանին տրամադրել անվճար եւ մատչելի գներով սպառազինություն: Հայաստանը մերժեց, պատրվակ բերելով, որ ՀԱՊԿ-ը չի ընդունում Ադրբեջանի ագրեսոր լինելու փաստը: Եթե Ադրբեջանին ագրեսոր համարելն այդքան կարեւորում եք, ինչո՞ւ նույն հարցադրումը Ֆրանսիայի առաջ չեք դնում, Բրիտանիայի առաջ չեք դնում: Այսինքն ընդամենը պատրվակ է պետք ՀԱՊԿ-ից հեռանալու համար:

ՀԱՊԿ-ն առաջարկել է երկու անգամ զորավարժություններ անցկացնել Հայաստանում 2023-ին: Չորավարժութե-

յունները զենք բերելու լեգիտիմ միջոց է: Հայաստանը սա էլ է մերժել: Առաջարկվեց խաղաղապահի առաքելություն գործարկել սահմաններին, դա էլ է մերժել: Այդքանից հետո ՀԱՊԿ-ն էլ ի՞նչ պետք է անի», - ասաց նա:

«Եթե մեր հարաբերությունները Մոսկվայի հետ լինեն փոխվատահեղի, ես վստահեցնում եմ, որ աննկատ կերպով Հայաստանի բոլոր ռազմական կարիքները կարելի է բավական արագ բավարարել», - ընդգծեց ռազմական փորձագետը:

### «Ժողովուրդ». Արցախի Նախագահը ճակատագրական որոշումն ուղարկել է Նիկոլ Փաշինյանին. Նոր զարգացումներ 23.02.2024



«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. «Արցախի Նախագահ Սամվել Շահրամանյանի եւ Նրա շրջապատի նկատմամբ սկսված իշխանական արշավն իր արմատներն ունի:

«Ժողովուրդ» օրաթերթը իր լավատեղյակ աղբյուրներից պարզեց, որ 2023 թվականի աշխատանքային վերջին օրերին Սամվել Շահրամանյանը Նիկոլ Փաշինյանին է ուղարկել Արցախի Հանրապետության լուծարման փաստաթուղթը չեղարկելու որոշումը՝ այդպիսով հայտարարելով, որ Արցախի Հանրապետությունը դե յուրե գոյություն ունի: Լուրի հավաստիությունը ճշտելու համար փորձեցինք կապ հաստատել նաեւ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանի հետ, սակայն վերջինս Նիկոլ Փաշինյանի հետ Փարիզ գործուղումների էր, զանգերին չպատասխանեց:

Բնականաբար, Սամվել Շահրամանյանի կայացրած որոշումը եւ դրա ուղարկելու քայլը վրդովեցրել է Նիկոլ Փաշինյանին եւ Նրա արցախատյաց թիմակիցներին: Նրանք համարում են, որ Արցախը Ադրբեջանի մաս ճանաչելով եւ հանձնելով՝ կարող են փրկել Հայաստանի Հանրապետության 29.800 քառակուսի կիլոմետր տարածքը, սակայն դա էլ չի հաջողվում: Ավելին՝ Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիևը շարունակում է տարածքային Նոր պահանջներ ներկայացնել Հայաստանի նկատմամբ՝ 8 գյուղեր, անկլավային այլ տարածքներ, ինչպես նաեւ 2021թ.-ից օկուպացված է պահում Սյունիքի ու Գեղարքունիքի հատվածներից Հայաստանի մոտ 127 քառակուսի կիլոմետր տարածք: Այսինքն՝ Արցախը գոհաբերելով՝ Հայաստանը ոչինչ չի շահել, այլ կորցրել է: Ապագայում սպասվելիք դժվարությունները, հարձակումներն ու ագրեսիաները որեւէ կողմի վրա բարդելու համար (որեւէ կերպ չի դիտարկվում Ադրբեջանը) Նիկոլ Փաշինյանը Նոր մեղավորներ է փնտրում եւ, ահա, գտել է. Արցախի ղեկավարությունն է Հայաստանում: Հրահանգված է Արցախի Նախագահի շուրջ հնարավորինս սեղմել օղակը, եւ առաջիկայում տարբեր թիրախավորումների ակնաստես կլինենք»:

## Ադրբեջանի մշակութային ցեղասպանության հերթական գոհը՝ Ստեփանակերտի «Անդրանիկ» փողոցում տեղադրված քանդակները

23.02.2024



Ադրբեջանը բռնազավթված բնակավայրերում շարունակում է պետական մակարդակով վարել անհանդուժողական քաղաքականություն՝ հայկական մշակութային ժառանգության նկատմամբ:

«Ամենօրյա պարբերականությամբ բազմաթիվ փաստեր ենք արձանագրում՝ օկուպացված Արցախում Ադրբեջանի կողմից պետական մակարդակով իրականացվող մշակութային ցեղասպանության առնչությամբ: «Հայքի մշակույթ»-ի օմբուդսմենի գրասենյակի գործընկեր Մխիթար Կարապետյանը հերթական անգամ ահազանգեց, որ Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտից ադրբեջանցի զավթիչների կողմից հրապարակված տեսանյութում վանդալիզմի հետքեր են նկատվում:

Խոսքը Էլմին Բայրամլիի կողմից 2024 թ. փետրվարի 13-ին յուրօրքում հրապարակված տեսանյութի մասին է: Մեր գրասենյակի կողմից կատարելով տեսանյութի ուսումնասիրություն՝ ակնհայտ դարձավ, որ այս անգամ Ադրբեջանի մշակութային ցեղասպանության հերթական գոհը դարձան Ստեփանակերտի «Անդրանիկ» փողոցում տեղադրված քանդակները:

Այս ամենը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ Ադրբեջանը պետական մակարդակով ոչնչացնում է Արցախի մշակութային ժառանգությունը:

Լուսանկարը՝ Մարութ Վանյանի», - հայտնում է Հայքի մշակույթի Օմբուդսմեն Հովիկ Ավանեսովը:

## Արցախի թեմի առաջնորդ Տեր Կրթանես Եպիսկոպոս Աբրահամյանը ուղերձ է հղել համայն հայությանը

23.02.2024



Արցախի թեմի առաջնորդ Տեր Կրթանես Եպիսկոպոս Աբրահամյանը ուղերձ է հղել համայն հայությանը, որում ասվում է.

«Մասնակցե՛ք և Ձեր ներդրումն ունեցե՛ք Արցախի մշակութային կազմակերպությունների պահպանման, նրանց գործունեության ապահովման, արցախյան մշակույթի տարածման ու հանրահռչակման գործում:

Նվիրատվություն կարող եք իրականացնել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ հաշվեհամարներով

AMD 220553351705000  
USD 220553350756001  
EUR 220553350624002  
RUR 220553350301958

Կարող եք նաև sms հաղորդագրություն ուղարկել 8000 կարճ համարին Հայաստանից՝ գրելով «Արցախ» բառը /1 հաղորդագրության արժեքը՝ 1000 դրամ/:

Participate and contribute to the preservation of Artsakh cultural organizations, ensuring their activities, spreading and popularizing Artsakh culture.

Donations can be made with account numbers of "AKBA BANK" OJSC

AMD 220553351705000  
USD 220553350756001  
EUR 220553350624002  
RUR 220553350301958»

## ՀՀ տարածք անցած Ադրբեջանի ՉՈՒ զինծառայողը ձերբակալվել է դիվերսիայի փորձի համար

29.02.2024



ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 15-րդ կետերով, 335-րդ հոդվածի 1-ին մասով, 340-րդ հոդվածի 1-ին մասով, 44-425-րդ հոդվածի 1-ին մասով և 469-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի զինծառայող Ռուսլան Էլդանիս-Օղլու Փենսիսովի կողմից 2024թ. փետրվարի 28-ին դիվերսիայի փորձ, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով, ինչպես նաև ազգային, կրոնով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության և թշնամանքի շարժառիթով սպանության փորձ կատարելու, ապօրինի կերպով հրազեն և ռազմամթերք կրելու և փոխադրելու, հրազենի և ռազմամթերքի մաքսանենգության և Հայաստանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատելու դեպքերի առթիվ: Այս մասին NEWS.am-ը տեղեկանում է ՀՀ քննչական կոմիտեից:

Ռուսլան Փենսիսովը, քննիչի որոշմամբ, ձերբակալվել է:

## Ֆրանսիայում թողարկվել են Միսաք Մանուշյանին և Շառլ Ազնավուրին նվիրված նամականիշներ 29.02.2024



Փետրվարի 27-ին Ֆրանսիայի փոստային ընկերության կենտրոնական գրասենյակում (Carrée d'Encre) մեծարվեց հայազգի երկու խոշոր գործիչների՝ Դիմադրության շարժման հերոս Միսաք Մանուշյանի և աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրի հիշատակը՝ նրանց նվիրված նամականիշների թողարկման հանդիսավոր արարողության շրջանակներում: Հայտնում են Ֆրանսիայում ՀՀ դեսպանությունից:

Միջոցառմանը ներկա էին և բացման խոսքով հանդես եկան Ֆրանսիայի սենատի փոխնախագահ Պիեռ Ուզուլիասը, Ֆրանսիայում ՀՀ դեսպան Հասմիկ Տովաջյանը, Ֆրանսիայի ԱԳՆ Մայրցամաքային եվրոպայի և Կենտրոնական Ասիայի վարչության տնօրեն Բրիս Ռոքֆոյը, Ֆիլապոստի խմբի եվրոպական և միջազգային հարցերով տնօրեն Ժան-Պոլ Ֆորսըվիլը, Ֆիլապոստի տնօրեն Պոլ Դվորկինը, Միսաք Մանուշյանի եղբոր թոռնուհին՝ Կատյա Գիրակոսյանը և Շառլ Ազնավուրի որդին՝ Միշա Ազնավուրը:

Դեսպան Տովաջյանն, իր խոսքում երախտագիտություն հայտնելով Ֆրանսիայի փոստային ընկերությանը Միսաք Մանուշյանին և Շառլ Ազնավուրին նվիրված նամականիշների թողարկման համար, ընդգծեց հայազգի երկու ականավոր գործիչների կարևոր դերակատարությունը հայ-ֆրանսիական հազարամյա բարեկամության ամրապնդման գործում:

Միսաք Մանուշյանին նվիրված չորս նամականիշ ներառող հավաքածուն (Collector timbre) Ֆրանսիայի փոստային ընկերությունը թողարկել է Դիմադրության շարժման հերոսի աճյունը Ֆրանսիայի Պանթեոնում՝ ֆրանսիացի մեծագույն գործիչների կողքին ամփոփելու իրադարձության կապակցությամբ՝ Ֆրանսիայում ՀՀ դեսպանության նախաձեռնությամբ և վերջինիս հետ սերտ համագործակցությամբ: Հավաքածուն թողարկվել է 8000 օրինակով:

Միջոցառման շրջանակներում կայացավ Շառլ Ազնավուրին նվիրված նամականիշի պատկերի ներկայացման հանդիսավոր արարողությունը: Պատկերի հեղինակը ծագումով վիետնամցի նկարիչ Հոմ Նգույենն է, իսկ նրա ստեղծագործության հիմքում՝ ֆրանսահայ անվանի լուսանկարիչ Ռոժե Կասպարյանի կողմից արված Շառլ Ազնավուրի լուսանկարը: Նամականիշի պաշտոնական թողարկումը՝ շուրջ 600 000 օրինակով, նախատեսված է մայիսին՝ երգչի 100-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Արարողությանը ներկա էին խորհրդարանականներ, հասարակական և քաղաքական գործիչներ, ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչներ:

## Ադրբեջանցի վանդալները շինարարական տեխնիկայի միջոցով ոչնչացնում Արցախի Հին Շեն բնակավայրի գերեզմանոցը 29.02.2024



Ադրբեջանը պետական մակարդակով ոչնչացնում է բռնազավթված Արցախի մշակութային ժառանգությունը: Ամենօրյա պարբերականությամբ ադրբեջանական վանդալիզմի տասնյակ փաստեր ենք արձանագրում: Համացանցում հրապարակված հերթական տեսանյութից հստակ երևում է, թե ինչպես են ադրբեջանցի վանդալները շինարարական տեխնիկայի միջոցով ոչնչացնում Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի Հին Շեն բնակավայրի գերեզմանոցը:

2020թ. սեպտեմբերի 27-ի թուրքադրբեջանական ահաբեկչական տանդեմի կողմից սանձազերծած լայնածավալ պատերազմից ու 2023 թ. Արցախի ամբողջական հայաթափումից հետո Ադրբեջանի պետական մակարդակով իրականացվող մշակութային ցեղասպանության քաղաքականության թիրախում են հայտնվել Շուշիի պատմական գերեզմանոցները, Հադրութի և Մարտունու շրջանների բնակավայրերի բազմաթիվ գերեզմանոցներ, Ասկերանի շրջանի Սղնախ գյուղի գերեզմանոցը, Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի եղբայրական գերեզմանատունը և այլն:

Այս ամենը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ Արցախի մշակութային ժառանգությունը գտնվում է ոչնչացման և յուրացման վտանգի տակ:

Ըստ «Չինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ արգելված է մշակութային ժառանգության հանդեպ վանդալիզմի, գողության, կողոպուտի, յուրացման, թշնամանքի և հաշվեհարդարի ցանկացած գործողություն: Հաագայի 1954 թվականի առաջին արձանագրությունն արգելում է օկուպացված տարածքներում ոչնչացնել մշակութային կամ հոգևոր արժեքները:

## «Հրապարակ». Արցախի կառավարությունը համապատասխան կարգ է մշակում 01.03.2024



«Հրապարակ» թերթը գրում է. «Գրել էինք, որ Արցախի կառավարությունը 1 ամիս առաջ փոփոխություն արեց «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում, որ այն արցախցիները, ովքեր ուզում են շուտ ստանալ իրենց կուտակած միջոցները, կարողանան հիմա վերցնել: Հիմա Արցախի կառավարությունը համապատասխան կարգ է մշակում՝ գործընթացը կազմակերպելու համար:

Մեր տեղեկություններով, երեկ վերջապես վերականգնվել է Արցախի ԱԺ կայքը, որտեղ պաշտոնապես հրապարակվել է օրենքը՝ այն չէր գործում արցախցիների բռնի տեղահանումից հետո՝ ադրբեջանական հարձակումների պատճառով: Իսկ փոփոխությունը հետեւյալն է. «Անհաղթահարելի ուժով՝ արտակարգ եւ տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված՝ մասնակցի համար (օգտին) կատարված կուտակային վճարների հաշվին ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայտը մարվում են, եւ դրա արդյունքում ձեւավորված միջոցները (անկախ դրանց չափից) մասնակցի ցանկությամբ փոխանցվում նրա այլ կուտակային կենսաթոշակային համակարգում բացված հաշվին կամ փոխանցվում նրա բանկային հաշվին՝ ԱՀ կառավարության սահմանած կարգով»:

Օրենքն ուժի մեջ է մտնում ԱՀ ԱԺ պաշտոնական կայքում հրապարակվելուն «հաջորդող 10-րդ օրվանից»: Փոփոխված դրույթի կիրարկումն ապահովող կառավարության որոշում կընդունվի 1 ամսվա ընթացքում, 9 ամսվա ընթացքում էլ գումարները կվերադարձվեն:

ՀՀ Կենտրոնական բանկը, որին դիմել էին արցախցիները, ձեռնպահ է մնացել այս գործընթացից, թեպետ կուտակային ֆոնդերի հետ ինքն է աշխատել: Մեր հարցմանը ԿԲ-ից պատասխանել են, որ հատկացումները կամ դրանց հետագա ճակատագրի հարցերը չեն մտնում ԿԲ իրավասությունների մեջ»:

## Ադրբեջանական հանցանքները Ներքին Հանդում. «Թաթոյան» հիմնադրամ 03.03.2024

Իրավունքի և արդարության կենտրոն «Թաթոյան» հիմնադրամը ներկայացրել է ադրբեջանական հանցանքները Ներքին Հանդում, այդ թվում՝ այդ դիրքերը, որտեղից սպանվել էին հայ զինծառայողները:



1. Ներքին Հանդը 3 կողմից շրջափակված է ադրբեջանական 25 անօրինական զինված դիրքով, որոնցից 15-ը գյուղի, այսինքն՝ Հայաստանի տարածքում են:

2. Ադրբեջանական զինված դիրքերը, որտեղից 13.02.2024թ. Հայաստանի տարածքում ՀՀ 4 զինծառայող սպանվել է, իսկ 1-ը՝ ստացել վիրավորում:

3. Ներքին Հանդում Հայաստանի տարածքում ադրբեջանական անօրինական զինված դիրքերից ամենից մեծ հեռավորությունը մոտ 2,060 մետր է (սահմանից դեպի երկրի խորքը):

4. Ներքին Հանդի դպրոցին ադրբեջանական անօրինական զինված դիրքերից ամենից մոտը 769 մետր հեռավորության վրա է:

5. Ներքին Հանդում խմելու ջրի ակունքները, Սբ. Հռիփսիմե եկեղեցին, գերեզմանոցը ադրբեջանական օկուպացիայի ներքո է: Մարդիկ ստիպված խմում են գետի ջուրը:

6. Ներքին Հանդում այգիները, արոտավայրերը, խոտհարքները և վարելահողերը ադրբեջանական օկուպացիայի ներքո են, վերացել է անասնապահությունը:

7. Ներքին Հանդում ադրբեջանական օկուպացիայի ներքո է 2,700 հեկտար տարածք, որից՝

1. 2,400 հեկտար հատուկ պահպանվող հողեր.
  2. 170 հեկտար անտառային հողեր.
  3. 130 հեկտար համայնքային հողեր:
- 2,700 հեկտարից բացի, 1,000 հեկտարից ավելի հողատարածք հայտնվել է վտանգավոր գոտում, որտեղ կա՛մ հնարավոր չէ իրականացնել գյուղատնտեսական կամ այլ տեսակի որևէ աշխատանք, կա՛մ այդ աշխատանքներն էականորեն դժվարացել են՝ կյանքի համար իրական վտանգների պատճառով:
8. Ներքին Հանդում ադրբեջանական զինծառայողները ոչնչացնում են բուսական և կենդանական աշխարհը, կառուցում անօրինական ճանապարհներ:

9. Ներքին Հանդը շրջափակված ադրբեջանական զինված դիրքերից լսվում են կրակոցներ, ականների պայթյուններ:

## Հայաստանի ո՞ր գյուղերն է այս կամ այն կերպ վերահսկում Ադրբեջանի ՉՈւ-ն

03.03.2024



Հայտարարության մեջ նաեւ ասվում է. «Արցախի Հանրապետության Ազգային ժողովի շենքը քանդելը, մեր խորին համոզմամբ, Բաքվի բռնապետական վարչախմբի պատասխանն է Արցախի Ազգային ժողովի վերջին շրջանի այն նախաձեռնության, որը նպատակ ունի կազմակերպել արցախցիների վերադարձը հայրենի օջախեր՝ միջազգային արդյունավետ երաշխիքների ներքո. ուստի վանդալիզմի այս ստոր ակտը ուղերձ է առ այն, որ Բաքուն չի պատրաստվում հանդուրժել հայ մարդու արժանապատիվ մուտքն Արցախ:

Հայաստանի ո՞ր գյուղերն է այս կամ այն կերպ վերահսկում Ադրբեջանի ՉՈւ-ն: Հարցին վարչապետի աշխատակազմից պարզաբանել են Sputnik Արմենիային:

Ավելի վաղ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ 31 ոչ անկախ գյուղերի կենսական տարածքները գտնվում են ադրբեջանական օկուպացիայի տակ: Այս գյուղերից օկուպացրած տարածքը կազմում է 170 քառ կմ:

Ըստ Կառավարության այդ համայնքներն են՝ Ջերմուկը՝ Վայոց Ձորի մարզում, Պարուկ Սեւակ համայնքը՝ Արարատի մարզում, Գեղարքունիքում՝ Կախանկն, Կուսնյան, Սոջ, Կոչ, Նորաբակ, Ներքին Շորժա, Վերին Շորժա, Ալունք համայնքներն են, Տավուշի մարզում՝ Բերքաբեր, Սարիգյուղ, Սեւքար, Վագաշեն, Պառավաքար, Մոլսես, Արծվաբերդ, Այգեձոր, Հինարի համայնքներն են, իսկ Սյունիքի մարզում՝ Քաջարանց, Սալվարդ, Գորայք, Սառնակունք, Անգեղակոթ, Աղիտու, Նորավան, Վաղատին, Վերիշեն, Խոզնավար, Տեղ, Վերին Հանդ համայնքները:

## Վանդալիզմի այս ստոր ակտը ուղերձ է, որ Բաքուն չի պատրաստվում հանդուրժել հայ մարդու արժանապատիվ մուտքն Արցախ. «Հայաքվե»

04.03.2024

Մեծ ցավով տեղեկացանք, որ Բաքվի բռնապետական ռեժիմը քանդել է տվել Արցախի անկախ պետականության խորհրդանիշներից մեկը՝ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի շենքը: Հայ ժողովուրդը ևս մեկ անգամ համոզվեց, որ Ադրբեջանը բացարձակապես պատրաստ չէ Հայաստանի հետ կայուն, անկեղծ ու երկարատև խաղաղության: Այս մասին հայտարարություն է տարածել «Հայաքվե» նախաձեռնությունը:

Այս քայլով Բաքուն հերթական անգամ ողջ աշխարհին ցույց տվեց իր ցեղասպան ու բարբարոս դեմքը: Քննադատության չի դիմանում միջազգային հանրության կողմից պատշաճ արձագանքի բացակայությունն ընդհանրապես, և ռուսական խաղաղապահ առաքելության անգործությունը՝ մասնավորապես:

Բաքվի նման քաղաքականությունը նաև արդյունքն է Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը գավթած վարչակազմի հակազգային ու անողնաշար կեցվածքի: Այս ամենը ցույց է տալիս, որ թշնամու հակամարդկային գործելաոճը կղադարի միայն այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը համախուժել ու արժանի հակահարված տա իրեն ցեղասպանել ձգտող Բաքվի վարչախմբին և վերականգնի իրավունքները սեփական հայրենիքի նկատմամբ:

«Հայաքվե» նախաձեռնության խորհուրդ

## Ադրբեջանցիներն Արցախում ավերել են զոհված զինծառայողներին նվիրված հուշահամալիրը, անհետացրել է 13-րդ դ. արձանագիր խաչքարը

15.03.2024


Ադրբեջանցիներն ավերել են Արցախի Ծար գյուղում գտնվող արցախյան ազատամարտում զոհված հայ զինծառայողներին նվիրված հուշահամալիրը, անհետացրել 1224 թ. արձանագիր խաչքարը: Այս մասին ահազանգում է ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության Գիտահետազոտական Կենտրոն» ՊՈԱԿ-ը:



Աղբրեջանցիներն ավերել են Արցախի Ծար գյուղում գտնվող արցախյան ազատամարտում զոհված հայ զինծառայողներին նվիրված հուշահամալիրը, անհետացրել 1224 թ. արձանագիր խաչքարը: Այս մասին ահազանգում է ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության Գիտահետազոտական Կենտրոն» ՊՈԱԿ-ը:

«Համացանցում հայտնված լուսանկարները ցույց են տալիս, որ Արցախի Ծար գյուղի 13-րդ դարի նշանավոր խաչքարն այլևս իր տեղում չէ: Մեր մշտադիտարկումները և որոնումները խաչքարի ֆիզիկական վիճակի վերաբերյալ անարդյունք մնացին: Հաշվի առնելով Աղբրեջանի քաղաքականությունը հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ՝ ենթադրելի է, որ հայկական խաչքարագործության այս եզակի օրինակը ոչնչացված է», - նշված է ՊՈԱԿ-ի ֆեյսբուքյան էջում:  
*Խաչքարային մշակույթը հայկական պատմամշակութային ժառանգության ինքնատիպ դրսևորումներից է, որի կերտման արվեստն ու խորհրդաբանությունը դեռևս 2010 թ. արժևորվել և ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ կյուլթական մշակութային ժառանգության ցանկ»-ում:*

### Աղբրեջանցի վանդալների թիրախում է հայտնվել Ստեփանակերտի Աստվածամոր Սուրբ Հովանի Մայր Տաճարը 04.03.2024



Բռնազավթված Ստեփանակերտում հերթական վանդալիզմի դեպքն է գրանցվել: Այս անգամ աղբրեջանցի վանդալների թիրախում է հայտնվել Ստեփանակերտի

Աստվածամոր Սուրբ Հովանի Մայր Տաճարը: Այս մասին է ահազանգում Հայքի մշակույթի Օմբուդսմեն Հովիկ Ավանեսովը:

Աստվածամոր Սուրբ Հովանի Մայր Տաճարի օժան առարողությունն իրականացրել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ն, 2019թ. ապրիլի 7-ին: Ըստ «Չինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ արգելված է մշակութային ժառանգության հանդեպ վանդալիզմի, գողության, կողոպուտի, յուրացման, թշնամանքի և հաշվեհարդարի ցանկացած գործողություն: Հաագայի 1954 թվականի առաջին արձանագրությունն արգելում է օկուպացված տարածքներում ոչնչացնել մշակութային կամ հոգևոր արժեքները:

### Աղբրեջանցի վանդալները քանդել են Ստեփանակերտի Վերածննդի հրապարակի պատկերաքանդակները 08.03.2024



Աղբրեջանի պետական վարչակարգը բռնազավթված Ստեփանակերտում շարունակում է ոչնչացնել պատմա-ճարտարապետական հուշարձանները:

«Աղբրեջանցի վանդալները ոչ միայն շինարարական ծանր տեխնիկա օգտագործելով քանդեցին Արցախի Ազգային ժողովի շենքը և Ազատամարտիկների միության գրասենյակը այլ նաև Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում գտնվող պատկերաքանդակները:

Այս ամենը ևս մեկ անգամ ապացուցում է, որ Աղբրեջանը պետական մակարդակով բռնազավթված Արցախում իրականացնում է մշակութային ցեղասպանություն:

Ըստ «Չինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ արգելված է մշակութային ժառանգության հանդեպ վանդալիզմի, գողության, կողոպուտի, յուրացման, թշնամանքի և հաշվեհարդարի ցանկացած գործողություն: Հաագայի 1954 թվականի առաջին արձանագրությունն արգելում է օկուպացված տարածքներում ոչնչացնել մշակութային կամ հոգևոր արժեքները:



Լուսանկարները տրամադրել է Հայքի մշակույթի օմբուդսմենի գրասենյակի գործընկեր Մխիթար Կարապետյանը»,-գրել է Հայքի մշակույթի Օմբուդսմեն Հովիկ Ավանեսովը:

### Ադրբեջանցիները Արցախում ոչնչացնում են գոհված հերոսների հիշատակը հավերժացնող փառքի անկյունները 20.03.2024



Ադրբեջանից վանդալները ոչնչացնում են հանուն հայրենիքի նահատակված հերոսների հիշատակը հավերժացնող փառքի անկյունները բռնազավթված Արցախի Հանրապետության ուսումնական հաստատություններում: Այս մասին է ահազանգում Հայքի մշակութային օմբուդսմեն, ադրբեջանագետ Հովիկ Ավանեսովը:

«2020 թվականի սեպտեմբերի 27-ից ի վեր Ադրբեջանն պետական մակարդակով ավերել է Արցախի տասնյակ հուշարձաններ և համալիրներ: 2020 թվականի դեկտեմբերին ադրբեջանցի վանդալները ոչնչացրել էին Թալիշի և Մատաղիսի հայկական հուշարձանները: Monument Watch անկախ ակադեմիական հարթակը հայտնել էր Բերձոր քաղաքի Փառքի հուշահամալիրի ոչնչացման, Արցախի Հարրուբի շրջանի Ուխտաձոր գյուղի՝ արցախյան ազատամարտին նվիրված հուշարձանի և խաչքարի ավիրման, Զաշաթաղի շրջանի Աղա-Նուս գյուղի աղբյուր-հուշարձանի քանդման, Անատոլի Չինևիչի կիսանդրու ոչնչացման, Մարտակերտ քաղաքի հուշարձան-խաչքարի ավիրման, Հայթերքի եղբայրական գերեզմանատան պղծման մասին:

Ադրբեջանի մշակութային ցեղասպանության թիրախում են հայտնվել նաև՝ Ավետարանոցի հուշահամալիրը, Արցախի հերոս Աշոտ Ղուլյանի հուշաքարը, Արցախի Հարրուբի շրջանի Հակակու գյուղի գոհվածների հիշատակին նվիրված համալիրը, Արցախի Շուշիի շրջանի Զարին տակ գյուղում Հայրենական Մեծ պատերազմի և արցախյան պատերազմի զոհերին նվիրված հուշարձանը, Շուշի քաղաքի Հայոց ցեղասպանության, Հայրենական պատերազմի և արցախյան պատերազմի զոհերի հիշատակին նվիրված կոթողը, Հարրուբի շրջանի Ազոխ գյուղի Հայրենական պատերազմի, արցախյան պատերազմում զոհվածների և Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը, Ակնաղբյուրի արցախյան պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը, Արցախյան ազատամարտում զոհված գե-

տավանցի ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշահամալիրը:

Այս ամենը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ Արցախի մշակութային ժառանգությունը գտնվում է ոչնչացման և յուրացման վտանգի տակ:

Ըստ «Չինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ արգելված է մշակութային ժառանգության հանդեպ վանդալիզմի, գողության, կողոպուտի, յուրացման, թշնամանքի և հաշվեհարդարի ցանկացած գործողություն: Հաագայի 1954 թվականի առաջին արձանագրությունն արգելում է օկուպացված տարածքներում ոչնչացնել մշակութային կամ հոգևոր արժեքները»,- գրել է նա:

### Գետավանի հուշարձանն՝ ադրբեջանական վանդալիզմի թիրախ 22.03.2024



Օկուպացված Արցախի Մարտակերտի շրջանի Գետավան գյուղում ադրբեջանական կողմը ոչնչացրել է Գետավան գյուղի ինքնապաշտպանության համար գոհված գետավանցի ազատամարտիկների հիշատակին կանգնեցված հուշարձանի պատին ամրացված հուշատախտակները: Գրում է Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում իրականացնող monumentwatch.org կայքը:

«Գետավանի հուշարձանը պաշտոնապես բացվել է 2016 թվականին: Հուշարձանի կենտրոնում տեղադրված էր քանդակագործ Վարազդատ Համբարձումյանի կերտած խաչքարը, որը ևս ոչնչացվել է: Հարկ ենք համարում նշել, որ սա վարպետի նմանօրինակ միակ աշխատանքը չէ Արցախում: «Թուր-խաչերը» կամ «սահմանային խաչերը» Վարազդատ համբարձումյանի նախաձեռնությամբ Ազատագրական պատերազմից հետո սկսեցին տեղադրվել Արցախի պահպանական գոտիներում՝ սահմանները ցուցելու և հաղթանակը խորհրդանշելու համար, հետո լայն տարածում գտան ինչպես Արցախում, այնպես էլ Հայաստանում:

Այստեղ «Թուր-խաչի» հորինվածքում հանդես է գալիս թուրը, որը կարծես քառաթև թուր լինի, այսինքն մենք չենք տեսնում սովորական թուր, որն ունի դաստակ, հորիզոնական բաժանարար և սայր. վարպետը կարծես

փորձել է պատկերել նրա ուժն ու գորուբությունը բոլոր ուղղություններով: Վարպետի խոսքերով «խաչը թուր է դառնում երբ հայրենիքը վտանգի մեջ է»:

## Մեր արձագանքը

Արդարադատության միջազգային դատարանը հաստատել է, որ օկուպացված տարածքներում գործող օրենքները՝ ներառյալ մշակութային արժեքների պաշտպանության դրույթները, ձեռք են բերել միջազգային սովորութային իրավունքի (infra Jurisprudence) կարգավիճակ, այսինքն գործում են որպես համընդհանուր և անշրջանցելի կանոն և պարտադիր են բոլոր պետությունների համար:

Կարևոր է նշել, որ խաչքարերի թիրախավորումը հատկապես արգելված գործողություն է և համարվում է ծանր հանցագործություն ուղղված ողջ մարդկությանը, քանզի «Հայկական խաչքարերի արվեստը. խաչքարերի սիմվոլիզմն ու վարպետությունը» 2010 թվականից ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2003 թ. ընդունված «Ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում» և համարվում է համամարդկային արժեք:

Խաչքարային մշակույթը լրացուցիչ պաշտպանություն ունի նաև պատերազմի ժամանակ և դրանից հետո: Ի մասնավորի, համաձայն «Չինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1954 թ. կոնվենցիայի լրացուցիչ՝ 1999 թ. ընդունված երկրորդ արձանագրության սկզբունքների, խաչքարային ողջ մշակույթն ունի ուժեղացված պաշտպանություն, և դրան հասցված ցանկացած վնաս, համաձայն արձանագրության 15-րդ հոդվածի ա կետի, «լուրջ խախտում» է, որը՝ որպես ռազմական հանցագործություն, կարող է հետապնդվել միջազգային դատարաններում»:

**«Եկել է չհանձնվելու, չլռելու և գործելու ժամանակը».** «Միասին» շարժման հայտարարությունը  
05.03.2024



Եկել է չհանձնվելու, չլռելու և գործելու ժամանակը: Այս մասին հայտարարություն է տարածել «Միասին» այլընտրանքային, հասարակական-քաղաքական շարժման համակարգող խորհուրդը:

Հայտարարությունում, մասնավորապես, ասվում է. «Հազարամյա Հայոց Արցախում հայաոչնչացման նոր կետին են հասել ցեղասպանության և վանդալիզմի բացարձակ դրսևորումներով քանդվում և ավերվում, կողոպտվում են հայերի գոյության և կենսագործունեության հիմնարար հաստատությունների խորհրդանիշերը՝ Արցախի խորհրդարանի, Արցախի կենտրոնական բանկի շենքերը, Նախագահական Նստավայրը, Հայ առաքելա-

կան եկեղեցու հուշարձանները: ՄԱԿ-ի անդամ պետությունը փաստացի ծաղրանքի է ենթարկում աշխարհի, քաղաքակրթության և միջազգային իրավունքի, ժողովրդավարության արժեքների պաշտպան համարվող երկրներին և միջազգային կառույցներին հայտարարելով, որ հարցերի լուծման իր նախընտրած միակ ճանապարհը բիրտ ուժի կիրառումն է, ուժի սպառնալիքով հարևան պետությունների ինքնիշխան տարածքների զավթումը, բնակչության ցեղասպանումը:

«Միասին» այլընտրանքային, հասարակական-քաղաքական շարժումը հայտարարում է, որ ժողովրդավարական և իրավական ճանապարհով ինքնորոշված Արցախի հարցը չի կարող այսպերպ լուծվել: Մենք լռելու և հանձնվելու իրավունք չունենք և այլևս չենք ունենալու: Ամենից առաջ դատապարտում ենք ժողովրդավարության անվան ներքո ՀՀ իշխանության ղեկավար դարձած Նիկոլ Փաշինյանին և իր կամակատարների կառավարությանը, որոնք ոչ միայն լռում են, այլև իրենք անգործունեությամբ ու անկամությամբ նպաստում են մարդկության դեմ հանցագործություններ կատարած Իլիամ Ալիևի ցեղասպանական ծրագրերի իրագործմանը, Արցախի բռնի ադրբեջանականացմանը և Արցախի հայ բնակչության հիմնարար իրավունքների ոտնահարմանը:

«Միասին» շարժումը վստահ է՝ Հայաստանում չեն կարող իշխանության գլուխ մնալ այն ուժերը, որոնց համար ոչինչ են ինքնիշխան ու անվտանգ պետության, պաշտպանված ու անկախ քաղաքացու, միջազգային իրավունքի գերակայության ժողովրդավարական արժեքները և բացարձակ են թշնամու կամքին հանձնվելու գնով սեփական իշխանությունն ամեն գնով պահելու ճիգերը: Այն իշխանությունը, որը չի կատարում ժողովրդի կամքը, վտանգել է ժողովրդի կյանքը, պետք է հեռանա, և Արցախի հարցը կրկին դառնալու է միջազգային ատյաններում կարգավորման հիմնահարց, Արցախը վերադարձնելու ենք հային: Եկել է չհանձնվելու, չլռելու և գործելու ժամանակը:

**Արցախի ԱԺ-ն դատապարտում է Ադրբեջանի վանդալիստական քաղաքականությունը.** հայտարարություն  
05.03.2024



Արցախի Հանրապետության Ազգային ժողովը հայտարարություն է տարածել՝ դատապարտելով Ադրբեջանի վանդալիստական քաղաքականությունը:

Հայտարարությունում ասվում է. «Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծված լայնամասշտաբ պատերազմից ու ամբողջական բռնազավթումից հետո վտանգված են Արցախի միջնադարյան բազում հոգևոր կենտրոններ, կրթահամալիրներ ու հուշակոթողներ, պատմամշակութային արժեքներ հանդիսացող շենքեր ու շինություններ:

Չնայած խաղաղության մասին միջազգային տարբեր հարթակներում սեփական բարձրակոչ հայտարարություններին՝ Ադրբեջանն անթաքույց փորձում է հայ ժողովրդի նկատմամբ իր ցեղասպանական ծրագրերը եզրակետին հասցնել: Դա հիմնականում արտահայտվում է հայկական քրիստոնեական պատմամշակութային, ազատագրական պայքարի և պետականակերտման խորհրդանիշ հանդիսացող հուշարձանների պղծմամբ, ոչնչացմամբ կամ էլ այսպես կոչված «աղվանական ծագման» հորջորջմամբ:

Վանդալիզմի վերջին դրսևորումներն են Ստեփանակերտի Աստմածամոր Սուրբ Հովանի Մայր Տաճարի պղծումը, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի և Ազատամարտիկների միության շենքերի հիմնահատակ ավերումը:

Ըստ զինված հակամարտությունների ժամանակ արժեքների մասին 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ արգելված է մշակութային ժառանգության հանդեպ վանդալիզմի, գողության, կողոպուտի, յուրացման, թշնամանքի և հաշվեհարդարի որևէ գործողություն: Թեև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մի քանի անգամ կոչեր են հնչել Արցախի պատմամշակութային ժառանգության ոչնչացմանը վերջ դնելու համար և խոստումներ եղել առաքելություն ուղարկելու, սակայն որևէ առաքելություն առ այսօր այդպես էլ չի ժամանել Արցախ, Ադրբեջանի կողմից արհեստական խոչընդոտների ստեղծման պատրվակով, և միզազգային հանրության անտարբերությունը և անուշադրությունն ազատություն են տվել ագրեսորի վանդալիզմին՝ դառնալով տարածաշրջանում նոր պատերազմների հրձիգ:

Արցախի Հանրապետության Ազգային ժողովը դատապարտում է Ադրբեջանի իշխանությունների կողմից հայկական հետքի վերացման բարբարոսական գործողությունները և իրավապաշտպան կազմակերպություններից, ՀՀ իշխանություններից պահանջում ադրբեջանական հակամշակութային բոլոր գործողությունների փաստերը մեկ առ մեկ ներկայացնել միջազգային իրավասու մարմիններին և ատյաններին՝ խնդրին տալով միջազգային հնչեղություն:

### **«Հրապարակ». Շահրամանյանն ակտիվ հանդիպումներ է ունենում տարբեր երկրների դիվանագետների հետ** 08.03.2024

«Հրապարակ» թերթը գրում է. «Արցախի մեր աղբյուրների փոխանցմամբ՝ նախագահ Սամվել Շահրամանյանը վերջին ամիսներին ոչ միայն ակտիվ քաղաքական հանդիպումներ է ունենում հայաստանյան տարբեր ուժերի, անհատների հետ, այլև ակտիվ շփումներ կան Հայաստանում ներկայացված տարբեր երկրների դիվանագետների հետ: Շահրամանյանը մի քանի դեսպանի

հետ է վերջերս հանդիպել, այդ թվում՝ Հայաստանում Ֆրանսիայի, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի դեսպանների: Իսկ քննարկման օրակարգի գլխավոր հարցը, ըստ մեր աղբյուրների, արցախցիների՝ Արցախ վերադարձի խնդիրն է:



Չնայած գրեթե բոլոր դիվանագետները խոսքային մակարդակում դա համարում են այսօրվա թիվ մեկ խնդիրը, սակայն երբ հարցը հասնում է միջազգային երաշխիքներին, որոնք պետք է տրամադրվեն, որպեսզի արցախցիների անվտանգությունն իրենց հայրենիքում ապահովվի, ոչ ոք նման երաշխիքներ չի տալիս»:

### **«Հրապարակ». Որ գյուղերն է առաջնահերթ պահանջում Ադրբեջանը** 08.03.2024



«Հրապարակ» թերթը գրում է. «Գրել էիք, որ անցած շաբաթ խորհրդարանում Նիկոլ Փաշինյանը ԶԳ-ի հետ հանդիպման ընթացքում խոսել է Տավուշի այն չորս գյուղերի մասին, որոնք Ադրբեջանն առաջնահերթ պահանջում է հանձնել իրեն: Այդ հարցով, ի դեպ, նաեւ Մյունխենում էր քննարկում եղել: Փաշինյանը թիմակիցների հետ խոսելիս շեշտել է, որ դրանց մեջ Տիգրանաշենը չի

մտնում, բոլորն էլ Տավուշի մարզում են: Այսպիսով՝ հայտնի է, թե խոսքը որ չորս գյուղերի մասին է. Բաղա- նիս-Այրում, Ներքին Ոսկեպար, Խեյրիմլի եւ Կրզըլ Յաջի- լի:

Հիշեցնենք, որ դեռեւս պատերազմից մեկ տարի անց նախկին վարչապետ Յրանտ Բագրատյանը բարձրա- ձայնեց, թե, իր տեղեկություններով, ադրբեջանցիներն արդեն չափագրումներ են անում նշված գյուղերում, իշ- խանությունը, բնականաբար, հերքեց, բայց կյանքը ցույց է տալիս, որ դրանք հեռու չէին իրականությունից: Ի դեպ, Տավուշի մարզպետ Յայկ Ղալումյանը եւս հայ- տարարել է, որ իրենց մարզում ադրբեջանական գյուղեր կան: Թե ինչու է հիմա խոսվում չորս գյուղերի, այլ ոչ թե ութի մասին, ինչպես նախկինում Փաշինյանն էր հայտա- րարում, իշխանական մեր աղբյուրների կարծիքով՝ նշված չորսի աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ դրանց հանձնումը խնդրահարույց չի լինի մեզ համար՝ այնպես, ինչպես մյուսներինը, դիցուք՝ Տիգրանաշենինը, որը փաստացի կապում է Հայաստանի մնացած մասը հարավին:

Այնուամենայնիվ պահանջում է ոչ խնդրահարույց տարածքները, հետո հանրությունը կընտելանա նաեւ մյուսների հանձնմանը: Այսինքն, Փաշինյանն իրակա- նացնում է փուլ առ փուլ հանձնման ծրագիրը՝ պարբե- րաբար հանրությանը վախեցնելով պատերազմով:

### «Փաստ». Ինչի՞ արդյունքում է աճել Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառությունը

09.03.2024



«Փաստ» օրաթերթը գրում է. «Պաշտոնական տվյալե- րով, 2024 թվականի հունվարին Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառությունը աճել է մոտ 79 տոկոսով և կազմել շուրջ 2,1 մլրդ դոլար: Ինչ խոսք, տպավորիչ ցու- ցանիչ է: Իսկ ինչի՞ արդյունքում է եղել այդ աճը: Որքան էլ արտաքուստ զարմանալի թվա, այդպիսի ցուցանիշը առաջին հերթին Ռուսաստանի հետ ապրանքաշրջանա- ռության կտրուկ աճի հետևանք է:

Բանն այն է, որ Ռուսաստանի հետ Հայաստանի «առև- տուրն» անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 93,3 տոկոսով՝ կազմելով 861,4 մլն դ- րամ: Նույնը, սակայն, հնարավոր չէ ասել, Եվրամիութ- յան պարագայում: Եթե ԵՄ անդամ երկրների հետ ապ- րանքաշրջանառությունը անցած տարի մի փոքր աճ էր գրանցել, ապա այս տարվա հունվարին արձանագրվել է 28,2 տոկոս անկում՝ կազմելով ընդամենը 140,4 մլն դո-


լար: Ավելին, Ֆրանսիայի հետ «առևտուրը» նվազել է 52,7 տոկոսով (6,4 մլն դոլար): Ի դեպ, ԱՄՆ-ի հետ ապ- րանքաշրջանառությունը աճ է գրանցել, սակայն ընդա- մենը 3,9 տոկոսով, ու կազմում է սոսկ 51,4 մլն դոլար:

Այսինքն, որպեսզի Մոսկվայի հետ կոնֆրոնտացիայի գնացող Հայաստանի իշխանությունները կարողանան Ռուսաստանին փոխարինողներ գտնել, ապա հավաքա- կան Արևմուտքը Հայաստանի հետ ապրանքաշրջանա- ռությունը պետք է ավելացնի մոտ 6 անգամ: Թվում է՝ դա այնքան էլ անհնար չէ՝ հաշվի առնելով, օրինակ՝ ԱՄԷ-ի փորձը, որը 2024 թ. հունվարին անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Հայաստանի հետ ապրանքաշրջանառությունն ավելացրել է 7 ան- գամ: Բայց, նախ՝ նույնիսկ նման աճի պայմաններում ծավալը կազմել է 338,9 մլն դոլար, այսինքն՝ երկուսու- կես անգամ պակաս, քան Ռուսաստանի ցուցանիշն է, և հետո՝ այդ թվերի մեջ առյուծի բաժինը կազմում է ռու- սական կապիտալի «ռեյլկացիան»:

Ինչի՞ մասին են այս թվերը: Ըստ տնտեսագետների, ա- ռաջին հերթին այն մասին, որ Հայաստանի տնտեսութ- յան դիվերսիֆիկացիայի մասին խոսակցությունները զուտ քաղաքական են՝ առանց տնտեսական հաշվարկ- ների: Ավելին, մեզ հետ զրույցում առանձին տնտեսա- գետներ կարծիք էին հայտնում, որ դա ուղղակի ֆան- տաստիկայի ժանրից է, ու հիմնական գործընկերոջ հետ հարաբերությունները վերջնականապես փչացելուց ա- ռաջ պետք է շատ լուրջ մտածել հնարավոր ծանր հետ- ևանքների մասին»:

### Վերածննդի հրապարակի հարակից տարածքում ադրբեջանցի վանդալները քանդել են ավանդական հայ տատիկի կերպարը

10.03.2024



Բռնազավթված Ստեփանակերտում հերթական վան- դալիզմի դեպքն է արձանագրվել: Այս մասին իր ֆեյս-

բուքյան Էջում գրել է Հայքի մշակութային օմբուդսմեն, ադրբեջանագետ Հովիկ Ավանեսովը:

«Ստեփանակերտի Վերածննդի հրապարակի հարակից տարածքում ադրբեջանցի վանդալները քանդել են ավանդական հայ տատիկի կերպարը ներկայացնող արձանը: Այս քաղաքականությամբ Ադրբեջանը ոչնչացնում Ստեփանակերտի հայկական դիմագիծը:

Ադրբեջանի պետական վարչակարգի այս քաղաքականությունը ևս մեկ անգամ ապացուցում է, որ Արցախում գտնվող հուշարձանները գտնվում են վտանգի տակ», - գրել է նա:

**193 հատ ստորագրած արձանագրություն կա, որ այս գյուղերը Հայաստանին են պատկանում, Ադրբեջանն էլ է ստորագրել. Բագրատյան**  
13.03.2024



Փաշինյանի ասուլիսում հնչեցված միտքն այն էր, որ այդ գյուղերը երբեք էլ հայկական չեն եղել: Այս մասին այսօր՝ մարտի 13-ին, լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը՝ անդրադառնալով Տավուշի 4 գյուղերի վերաբերյալ Փաշինյանի հայտարարությանը:

«Տալիս ենք գյուղեր, որոնք մերն են եղել բոլոր տեսակի թղթաբանություններով, հետո ինչ, որ այդտեղ ադրբեջանցիներ են ապրել, դա նշանակություն չունի: Այդ գյուղերը տալուց հետո մենք արդեն խնդրահարույց է դառնալու Իրան գնալը ավտոճանապարհով, խնդրահարույց է դառնում Վրաստան գնալը, Թուրքիան էլ այն կողմից կուզի Ամասիան ու Բավրայի ճանապարհն էլ կփակվի», - ասաց նա:

Բագրատյանը ասում է, որ 80-ական թվականներին 193 հատ ստորագրած արձանագրություն կա, որ այս գյուղերը Հայաստանին են պատկանում, այդ արձանագրությունները ստորագրել է նաև Ադրբեջանը:

«Հիշում եք Վլադիմիր Մովսիսյանին, որ թուրքերը փորձում էին փախցնել, Վլադիմիր Մովսիսյանը գնացել էր այդ պրատակալների հետեկից, որ հողերը հետ ստանա, 17 հազար հեկտար հետ ստացավ, բայց միայն Ներքին Հանդում տարիուկես առաջ իրենք հանձնեցին 27 հազար հեկտար», - ասաց նա:

Լրագրողի հարցին, թե երբ են գործողություններ լինելու, Բագրատյանը նշեց, որ երբ հանրությունը ցույց տա, որ ուժ է ներկայացնում, կլինեն քաղաքական գործողություններ:

«Պահի գալը կապ ունի նրա հետ, թե քանի մարդ ենք մենք հավաքում, արդյոք այս հանրահավաքը արտահայտում է ժողովրդի մեծ մասի դժգոհությունը, թե մասնավոր մեր ծանոթներն են եկել հանրահավաքին», - ասաց նա:

**ԳԱՎ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը գործարկել է հարթակ, որում ներկայացվում է Արցախի մշակութային ժառանգությունը**

13.03.2024

Sites and Monuments



ՀՀ ԳԱՎ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը գործարկել է «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) ակադեմիական հարթակը: Այն աշխարհին է ներկայացնում Արցախի մշակութային ժառանգությունը, հետևում դրա արդի վիճակին, արձագանքում ադրբեջանական վանդալիզմի դեպքերին: Տվյալների հավաքմամբ և մշակմամբ զբաղվում է ինստիտուտում ստեղծված «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» խումբը և «Մոնումենտ վոյթ» թիմը:

ԳԱՎ-ից NEWS.am-ին հայտնում են, որ հարթակի հիմնական նպատակն Ադրբեջանին անցած Արցախի անշարժ մշակութային ժառանգության, թանգարանների, մշակութային օջախների քարտեզագրումը և գույքագրումն է՝ վիճակը մինչև պատերազմը, ընթացիկ վիճակին հետևելը և փոփոխությունների վավերացումը (ավերում, ձևափոխում, վերօգտագործում, քանդակների, պատկերների, արձանագրությունների ջնջում ու փոփոխում, նոր սիմվոլների կիրառում և այլն), և այդ ամենը միջազգային գիտական ու մշակութապահպան հանրությանը ներկայացնելը:

«Հարթակը հատուկ ձևաչափով մշակված գիտական հոդվածների տեսքով ներկայացնում է Արցախի մշակութային ժառանգությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը՝ հնավայրերը, հուշարձանները, կոթողները, քաղաքացիական կառույցները, թանգարանները, հավաքածուները, առանձին մանրամասները: Ահագանգերի բաժնի հոդվածները ներկայացնում են Ադրբեջանի բռնալուծարան քաղաքականությունը և կոնկրետ դեպքերը, գնահատում դրանք միջազգային մշակութապահպան կոմպենսացիաների լույսի ներքո», - ասաց գիտական խմբի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը:

Նա նշեց, որ բացի հարթակից «Արցախի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» խմբի և «Մոնումենտ վոյթ» թիմի հետազոտությունները տպագրվել են միջազգային ճանաչում գտած հանդեսներում և ձեռնարկներում (Electrum, Patrimoines, Gruyter, Brill):

«Մշակութային ժառանգության հետազոտության, սահագանգման և պահպանության ասպարեզում թիմի հետազոտական աշխատանքը հիմնվում է միջազգային կոմպենսացիաների, տեսական ու մեթոդաբանական մոտեցումների և պրակտիկաների վրա: Դրանք հայաստանյան իրականության մեջ նորարարական են, հավասարակշռված և անկողմնակալ, ինչն էլ պայ-

մանավորում է արդյունքների օգտագործելիության բարձր մակարդակը: Թիմը համապատասխան տեսական, գործնական և տեղեկատվական աջակցություն է ցուցաբերում ՀՀ անվտանգության խորհրդին, ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, ՀՀ Առաքելական եկեղեցուն», - ասաց պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը: Ըստ նրա՝ միջազգային և հայաստանյան մշակութապահպան կառույցները, լրատվամիջոցները հաճախ են օգտագործում «Մոնումենտ վոթչի» կյուբերը որպես չեզոք գիտական արդյունք և իրավիճակների անկողմնակալ փաստագրում: «Արդյունքները ներկայացվել են Եվրախորհուրդ, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն: Թիմը համագործակցում է ասպարեզի մի շարք կազմակերպությունների և խմբերի՝ Caucasus Heritage Watch-ի, Հայկական ճարտարապետություն և սուս-նասիրող հիմնադրամի, Save Armenian Monuments-ի հետ», - ասաց պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը: Հարթակի ստեղծմանն աջակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Ֆորդի հիմնադրամը, Գյուլբենկյան հիմնադրամը, Հայ բարեգործական ընդհանուր միությունը, անհատ հովանավորներ:

**«Փաստ» Ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ Նիկոլ Փաշինյանի հանձնողականության հերթական «արարը»**  
21.03.2024



«Փաստ» օրաթերթը գրում է. «Ինչպես հայտնի է, օրերս Նիկոլ Փաշինյանն այցելել էր Տավուշի մարզ՝ հանդիպելու Ոսկեպար, Բաղանիս, Կիրանց և հարակից այլ համայնքների բնակիչների հետ և փաստացի համոզելու, որ պետք է կատարել Ադրբեջանի պահանջն ու հանձնել Տավուշի չորս գյուղերը (Բաղանիս Այրում, Աշաղը (Ներքին) Ոսկեպար, Խելյրիմլի, Կրզըլ Հաջիլի): Հանդիպման ամբողջ նպատակն է եղել վախ ներշնչել, որ չհանձնելու դեպքում «շաբաթվա վերջին» պատերազմ կլինի: Հիշեցնենք, որ օրեր առաջ Նույն Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, թե այդ բնակավայրերը երբեք Հայաստանի տարածքում չեն եղել: Այս օրերին հաճախ խոսվում է բուն տարածքների հանձնման, այսպես ասած՝ «հող հանձնելու» մասին, սակայն ոչ պակաս կարևոր է հասկանալ, թե իրականում ի՞նչ կլինի, եթե Նիկոլ Փաշինյանը որոշի հանձնել այդ տարածքները: Նախ՝ քարտեզին Նույնիսկ թեթևակի հայացք նետելով՝ ակնհայտ է դառնում, որ Ոսկեպար գյուղը կհայտնվի լիակատար շրջափակման մեջ, իսկ Կիրանց և Բաղանիս գյուղերը՝ մասնակի շրջափակման մեջ: Երկրորդ՝ Երևան-Թբիլիսի ռազմավարական ճանապարհը փաստացի կփակվի, թշնամու վերահսկողության տակ կհայտնվի նաև ռազմավարական գազատարը: Թշնամին կմոտենա վերոնշյալ երեք գյուղերին մի քանի տասնյակ մետրի հեռավորության վրա, ինչն այդ համայնքներում կյանքը պարզապես կդարձնի անտանելի, եթե չասենք՝ անհնար: Սրան գումարած՝ մեր լավագույն պաշտպանական բնագծերը կանցնեն թշնամուն՝ դրա ծանր հետևանքներով:

«Փաստ» թերթի տեղեկություններով, Նիկոլ Փաշինյանի պատրաստական հանձնողականության հերթական այս «արարից» զայրացած են ոչ միայն տեղի բնակիչները, ընդհանրապես Հայաստանի հասարակության՝ մտածելու ունակություն ունեցող հատվածը, այլ նաև գիևփորականությունը: Բանն այն է, որ նրանք հիանալի հասկանում են, որ կամ պետք է հրաժարվեն կատարել գործերը հետ քաշելու հրամանը, կամ դառնան հանցակից. բանն այն է, որ իրավաբանները, նաև տարբեր քաղաքական ուժեր հայտարարել են, որ գործ ունենք հանցագործության հետ: Օրինակ՝ «Հայաքվե» նախաձեռնության համակարգող Ավետիք Չալաբյանն օրերս նշել էր, որ ՀՀ ցանկացած տարածքի գիջում այլ պետությանը հանցագործություն է Հայաստանի սահմանադրական կարգի դեմ և, համաձայն Զրեական օրենսգրքի 421 հոդվածի, ենթակա է խիստ պատժի: Նշվում է նաև, որ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունը, թե Ադրբեջանի կողմից հնչեցված բնակավայրերը ՀՀ-ին չեն պատկանում, Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության դեմ ուղղված հանցագործություն է, քանզի որևէ պաշտոնյա իրավասու չէ միանձնյա որոշել, թե որն է ՀՀ տարածքը»:

**Ամենայն Հայոց Կաթողիկոս. հայ ժողովուրդը կանգնած է գոյաբանական խնդրի առջև**

16:08, 31.03.2024  
Տարածաշրջան: Հայաստան  
Թեմա: Հասարակություն



Վեհարանում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայտարարել է, որ Զրիստոսի Սուրբ Հարության տոնն այս տարի չի պարունակում նախորդ տարիների ուրախությունն ու ընծությունը: Հայտնում են Մայր Աթոռ Սուրբ Էմիհանի տեղեկատվական կենտրոնից: Վեհափառն ասել է, որ ժամանակները բարդ են և անկանխատեսելի զարգացումներով լեցուն հայ ժողովրդի և Հայաստանի համար: Միեւնույն ժամանակ Վեհափառ Հայրապետը նկատել է, որ Զրիստոսին հավատացող ժողովուրդը պատմության ընթացքում իր հավատքով կարողացել է հաղթահարել այսօրվա փորձություններից ոչ նվազ ծանր դժվարություններ:

**Ադրբեջանի ծավալապաշտական գործողությունները անմիջական սպառնալիքներ են ստեղծում մեր պետության անվտանգությանը. կաթողիկոս**

31.03.2024



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամ է հղել Տեր Հիսուս Զրիստոսի Հրաշափառ Հարության տոնի առիթով: Պատգամում մասնավորապես ասվում է.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն Սրբոյ. ամէն:

«Չսուրբ եւ զիրաշալի եւ զյաղթող զյարուբիւնդ Քո օրինեմք եւ փառաւորեմք» (Ժամագիրք):

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության ավետիսն է հնչում այսօր մեր եկեղեցիների սուրբ խորաններից: Աքանջելախորհուրդ ավետիսը հույսով ու հոգեւորոգ զգացումներով է պարուրում հայրենիքի ու ազգային կյանքի ցավերով ու կորուստներով դառնացած մեր սրտերը: Կյանքը հաղթանակել է, մահը պարտվել ու խորտակվել: Հավատքով ու առ Աստված ապավինության միասնաբար օրհնաբանենք Տիրոջը ժամասացի խոսքերով. «Սուրբ և հրաշալի և հաղթող Քո Հարությունը օրհնում ենք և փառավորում»: Քրիստոս իր Հարությամբ մարդկությանը ազատել է չարի իշխանությունից, ցույց տվել ներման և սիրո ճանապարհը, հաշտություն հաստատել մարդու և Աստծո միջև և ընծայել հավիտենական կյանքի հույսն ու շնորհը: Աստվածորդու ողորմածությամբ կյանքի արշալույսն է տարածվել մահվան խավարի վրա: Կենարար խաչը, որի վրա հեղվեց Տիրոջ Սուրբ Արյունը, մահվան հանդեպ հաղթության նշան է դարձել, Հարության հավատը՝ չարին պարտության մատնելու երկնապարզ և ուժ: Այո, սիրելիներ, հաղթող է, սուրբ է հրաշալի Քրիստոսի Հարությունը: Աշխարհի հարավորտիս իրադարձությունների և հատկապես բարդ ու դժվարին իրավիճակների մեջ Հարության շնորհներով հավատացյալները գորանում են՝ վեր հանելու փորձություններից, մերժելու կորստաբեր երևույթներն ու կործանարար մտածումներն ու գործերը, հաղթահարելու աղետաբեր պատերազմների արհավիրքները, նորոգվելու Տիրոջով, ինչպես որ Սուրբ Գիրքն է վկայում. «Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է» (Բ Կորնթ. 5.17): Համայն մարդկությանն այսօր էլ հնչում է հրավերը առաջնորդվելու աստվածադիր պատվիրաններով, մահվան հանդիման կերտելու կյանքի հաղթանակը, անվեհեր պաշտպանը լինելու ճշմարտության ու արդարության և առանց Աստծո մեռյալ գոյությունը փոխարինելու Տիրոջ հետ հարուցյալ կյանքի: Այս կոչին ականջալուր, «վասն հավատո, վասն հայրենյաց» սրբազան ուխտով միաբանված՝ պատմության հոլովույթներում դիմակայել ենք բազում դժվարությունների ու փորձությունների: Հարության հավատի վկայությունը նաև մեր օրերում հռչակումն է մեր ժողովրդի դավանանքի և ազգային սրբազան արժեքներին հավատարմության, որոնք դարեր շարունակ երաշխիքն են եղել հայոց ազգի ինքնության ու լինելության, դպրության ու գիտության զարգացման: Հարկ է այս արժեքներով սերունդներ կրթել և առնադարտ ու անկորուստ պահպանել մարդկության գիտամշակութային գանձարանը հարստացրած մեր նախնյաց ավանդներն ու ժառանգությունը:

Սիրելի բարեպաշտ զավակներ ի Հայաստան և ի սփյուռս, Տիրոջ Սուրբ և Հրաշափառ Հարությունը գոտեանդող խրախույս է ամենքիս հույսով ու արիությամբ դիմագրավելու մեր երկրի առջև ծառայած մարտահրավերները՝ հատկապես հետպատերազմյան այս ծանր շրջանում, երբ բռնազավթված ու հայաթափված է Արցախը, և չեն դադարում Արրբեջանի ծավալապաշտական ու սադրիչ գործողությունները նորանոր պահանջներով, որոնք անմիջական սպառնալիքներ են ստեղծում

մեր պետության անվտանգությանը: Հանցագործ դրսևորումներով շարունակվում են Արցախի պատանդառված քաղաքական ղեկավարության և անօրինաբար գերության մեջ պահվող մեր զավակների նվաստացումները, ինչպես և արցախահայության իրավունքների անտեսման, Արցախում հայկական հոգևոր-մշակութային ժառանգության յուրացման ու ոչնչացման անթաքույց քաղաքականությունը: Դատապարտելի այս իրողությունների հանդիման մեր ժողովրդի սեպուհ պարտքն է հաղթահարել ներազգային տարածայնություններն ու անմիաբանությունը, լծվել ծանր կորուստներ կրած մեր ազգի վերքերի ամրախնայում և կարողությունների մեկտեղմամբ հայրենիքի հզորացմանը:

Հարուցյալ կյանքը, հիրավի, սկսվում է քրիստոսավանդ պատգամներով ապրելու վճռականությամբ, արհավիրքներից ու տառապանքներից դեպի կենսանորոգ ձեռքբերումներ առաջին քայլից: Այս գիտակցությունը, այս ոգին պիտի աննկուն պահենք մեզանում, չընկրկենք մեզ պատուհասած փորձությունների դիմաց, չգործենք պարտվողական հոգեբանությամբ և չվերածվենք վիատված ու տկար ազգի՝ վտանգելով մեր հայրենիքի ապագան և անկախ պետականությունը: Մեր ընթացքը չի վերջանում մեր մարտիրոսների ու քաջորդիների նահատակության վայրերում և ոչ էլ Արցախում թողնված շիրիմների մոտ: Չարի կողմից մեզ համար փորված գերեզմանը բոլոր ժամանակներում թափուր է մնալու, քանզի մենք Քրիստոսի հետ ներդրությունները հաղթահարող և ամեն գողգոթայից հարության հավատքով հառնող ժողովուրդ ենք:

Արդարև, մեր ապագայի վերաբերյալ վճիռը խավարինն ու մահվանը չէ, այլ կյանքինն ու հարությանը: Աստծո հետ հզոր հավատքով, անընկճելի կամքով ու ոգով վերհանել կարող է ոչ միայն անհատը, այլև ազգն ու պետությունը: Մեր ժողովրդի համար ներկա բարդ պայմաններում կենսական և հրամայական է մեր երկրի հզորացումը, կենսական է ապրել ու գործել անսակարկ հայրենասիրությամբ ու ազգանվիրումով: Այս հաստատական ընթացքով կարող պիտի լինենք կերտելու նոր հորիզոնները մեր պատմության և վերագարթոնքը պետական, ազգային-եկեղեցական մեր արժանապատիվ կյանքի: Այսպես իրականություն պիտի լինի առաքյալի բացականչությունը նաև մեր ժողովրդի համար. «Ո՛ր է, մահ, քո հաղթությունը, ո՛ր է, գերեզման, քո խայթոցը» (Ա Կորնթ. 15.55): Արդ, վառ պահենք մեր սրտերում առ հարուցյալ Քրիստոս մեր հավատը, հույսն ու սերը, գալիքի բարի ակնկալությունը: Աստված մեզ կոչում է հարության, ուստի, թոթափենք մեզանից երկյուղն ու հուսահատությունը, հեռացնենք մեզանից ատելությունն ու թշնամանքը, պիղատույան ու հուղայական գործելակերպը, մեր աչքերը հառենք հարուցյալ Փրկչին և ընթանալով միմիայն հարության հաղթական ճանապարհով: Այս մաղթանքով և Սուրբ Հարության ավետիսով ողջունում ենք մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Ս. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Ս. Սահակ արքեպիսկոպոս Մաշայանին, քույր Ե-

Կեղեցիների հոգևոր Պետերին՝ հայցելով Ամենակալ Աստծո զորակցությունը իրենց առաքելության արդյունավորման մեջ: Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգևոր դասին և հավատավոր համայն Մեր ժողովրդին ի հայրենիս և ի սփյուռս:

Սիրելիներ, Սուրբ և Հրաշափառ Հարության տոնի այս լուսառատ օրը մեր սրտերից աղոթք բարձրացնենք առ Ամենակալն Աստված, որ աշխարհին պարզևի խաղաղություն և բարօրություն, Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանին տարածյալ պահի մեր հայրենիքի վրա և օրհնի ու երկնահեղ շնորհներով պայծառացնի ազգս հայոց՝ ապրելու ապահով ու անվտանգ կյանքով և փառավորելու Ամենասուրբ Երրորդությանը այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

Քրիստոս յարեալ ի մեռելոց,  
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

## Մշակույթ

### Հին քարեդարյան մշակույթի հարուստ հավաքածու է հայտնաբերվել մայրաքաղաքի ամենահին «Երևան-1» քարայրում 29.02.2024



Երևանում Հրազդան գետի ափին հայտնաբերվել են տասնյակ քարանձավներ, որոնք բնակեցված են եղել մարդկության պատմության ամենավաղ շրջանից՝ վաղ հին քարի դարից: Երևանի քաղաքապետարանից NEWS.am-ին հայտնում են, որ Հին քարեդարյան մշակույթի հարուստ հավաքածու է հայտնաբերվել մայրաքաղաքի ամենահին՝ «Երևան-1» քարայրում: Այստեղից հայտնաբերվել է ավելի քան 20 հազար՝ տարբեր գույների ու երանգների՝ վանակատից, կայծքարից, բազալտից և հասպիսից պատրաստված բազմատեսակ աշխատանքային գործիքներ, նաև կենդանիների ոսկորներ: Հայտնաբերվել է նաև քարայրի բնակչի՝ համեմատաբար լավ պահպանված կմախքը: Հնագիտական Նյութերը պահպանվում են Երևան քաղաքի պատմության թանգարանում:

### Օհանավանի վաղ միջնադարյան ժայռափոր կառույցից հայտնաբերվել է խնկաման՝ խունկի մնացորդներով 07.03.2024

Օհանավանի տարածքում բացված վաղ միջնադարյան ժայռափոր կառույցից հայտնաբերված 56 հնագիտական առարկաներից մեկը խնկաման է: Առարկան «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի Թանգարանային առարկաների վերականգնման լաբորատորիայում մաքրվել է դարերի փոշուց: Դարավոր պատմությամբ առարկայի մեջ պահպանված է եղել խունկի մնացորդներ, ինչը առիթ է տալիս նոր հետազոտություն իրականացնելու համար:

«Խնկամանը փոշով է ծածկված եղել և լավ է, որ մասնագետներն են աշխատել առարկայի հետ, մաքրելիս 5-րդ դարի խունկ են հայտնաբերել, որը շատ լավ բույր ունի»,- ասել է հնագետ Աշոտ Փիլիպոսյանը:



ՊՈԱԿ-ից հայտնում են, որ դարերի հեռավոր մեզ հասած խունկը «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը առաջիկայում կուղարկի հետազոտության պարզելու՝ ինչ խունկ է և ինչից է պատրաստված:

### Հնագետները Թուրքիայում գտել են Հայոց Երվանդունի արքայատանը պատկանող Անտիոք I թագավորի արձանագրությունը 18.03.2024



